Հրատարակված է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով
գերագույն հանձնակատարի գրասենյակի և Միավորված ազգերի կազմակերպության
Հանրային տեղեկատվության վարչության կողմից:

UNITED NATIONS
HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER

Հայերեն թարգմանությունը՝ ՄԱԿ ՀՏՎ երևանյան գրասենյակի:

© DPI/1394 Rev.2 – June 2013

© UNO/DPI Yerevan/144 – December 2013

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

ՎԻԵՆՆԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

20 ՏԱՐԻ

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՆՈՒՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

1993 Թ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՎԻԵՆՆԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ
ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ընդունված Մարդու իրավունքների համաշխարհային
խորհրդաժողովի կողմից 1993 թ. հունիսի 25-ին

ՆԱԽԱԲԱՆ

1993 թվականին Վիեննայում կայացած Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ուղենշային դեր ունեցավ Միավորված ազգերի կազմակերպության պատմության մեջ: Վիեննայի հռչակագրի և Գործողությունների ծրագրի ընդունումն առաջ մղեց ՄԱԿ-ի Կանոնադրության և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքների կենսագործմանն ուղղված մեր ջանքերը: Խորհրդաժողովի 7000 մասնակիցները հաղթահարեցին հիմնական տարբերությունները՝ ստեղծելով զորեղ արդյունք, որով ընդգծվեց, որ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական իրավունքներն անբաժանելի են ու փոխկապակցված, և դրանցից յուրաքանչյուրը նպաստում է մյուսի իրացմանը:

Վիեննայի հռչակագրով և Գործողությունների ծրագրով վերահաստատվեցին կարևոր սկզբունքներ, ներառյալ՝ մարդու իրավունքների համընդհանուր բնույթը և Պետությունների՝ դրանք կենսագործելու պարտավորությունը: Այն աներկբայորեն հռչակեց կանանց իրավունքները և ընդգծեց անպատժելիության դեմ պայքարի անհրաժեշտությունը, այդ թվում՝ միջազգային մշտական քրեական դատարանի ստեղծման միջոցով:

Հաստատվեց իրավունքների խթանման ու պաշտպանության առանցքային դերը Միավորված ազգերի կազմակերպության ինքնության և նպատակների իրագործման տեսանկյունից: Սրա արդյունքում կայացվեց կարևորագույն որոշում՝ ստեղծելու Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոնը: Որտեղ և երբ էլ խախտված կամ վտանգված են եղել իրավունքները, Գերագույն հանձնակատարի ձայնը եղել է հետևողական, հստակ և հնչեղ՝ բարձրացված հանուն արժանապատվության և հաշվետվողականության:

Վիեննայի խորհրդաժողովը մարդու համընդհանուր իրավունքների կենսագործմանն ուղղված մարդկության ձգտումների առումով կարևոր հանգրվան էր: Սակայն մենք դեռևս երկար ճանապարհ ունենք անցնելու, որպեսզի սկզբունքը վերածենք իրականության: Չափազանց շատ վայրերում չափազանց մեծաթիվ մարդկանց համար մարդու իրավունքներն ու իրավունքի գերակայությունը շարունակում են մնալ մի հեռավոր երազանք: Միայն այն դեպքում, երբ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունն ու հավասար իրավունքները լիովին հարգվեն, մենք կարող ենք հուսալ, որ այս աշխարհում կհաստատվի ազատություն, արդարություն և խաղաղություն:

Նշելով Վիեննայի հռչակագրի և Գործողությունների ծրագրի 20-րդ տարեդարձը՝ եկեք բազմապատկենք մեր ջանքերը՝ իրականացնելու մեր հավաքական պարտականությունը՝ ամենուր խթանել և պաշտպանել բոլոր մարդկանց իրավունքներն ու արժանապատվությունը:

Բան Կի-Մուն
ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քսան տարի առաջ՝ 1993 թ. հունիսին, ավելի քան 7000 մասնակիցներ հավաքվեցին Վիեննայում՝ մասնակցելու Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովին: Ես նրանցից մեկն էի՝ որպես Հարավային Աֆրիկայի կին ակտիվիստների խմբի ներկայացուցիչ: Մեզանից շատերը բավականին մտահոգ էին խորհրդաժողովի տապալման վտանգի պատճառով, քանի որ բազմաթիվ երկրներ կողմ էին քաղաքական և քաղաքացիական իրավունքների առաջնայնությանը կամ բացառիկությանը, իսկ այլք փաստարկում էին հօգուտ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առաջնային նշանակության:

Բանավեճի ոլորտները բազմաթիվ էին. թվում էր՝ դրանք խորն են, հաշտության հնարավոր եզրերը՝ բացակա: Ավելին, գլոբալ աշխարհաքաղաքական միջավայրը փոփոխվում էր սրընթաց: Սառը պատերազմի ավարտով ստեղծվել էր հույսի մթնոլորտ, որը Խորհրդաժողովի գումարմանը նպաստած գլխավոր գործոններից մեկն էր: Բայց, միևնույն ժամանակ, Վիեննայի Միջազգային կենտրոնից (այստեղ տեղի էր ունենում խորհրդաժողովը) մեքենայով մեկ օրից էլ պակաս ժամանակում անցնելու հեռավորության վրա ծավալվում էին նախկին Հարավսլավիայի հակամարտությունները:

Եվ այնուամենայնիվ, խորհրդաժողովը մենք եզրափակեցինք զորեղ, ուղենշային փաստաթղթով՝ Վիեննայի հռչակագիր և Գործողությունների ծրագիր, որը քսաներորդ դարի վերջին քառորդում մարդու իրավունքների վերաբերյալ ստեղծված ամենանշանակալի փաստաթուղթն է: Դրանով հստակորեն ամրագրվեց, որ մարդու իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկապակցված, և պետությունների վրա պարտավորություն դրվեց խթանելու և պաշտպանելու մարդու բոլոր իրավունքները՝ «անկախ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգից»:

Մարտահրավեր նետելով արհեստական հիերարխիային, համաձայն որի սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները ոմանց կողմից դիտվում են իբրև պակաս կարևոր, քան քաղաքական և քաղաքացիական իրավունքները, խորհրդաժողովը հաջողությամբ կազմաքանդեց պետություններին բաժանած երկրորդ պատը:

Վիեննայի խորհրդաժողովը մեկնարկն էր մի գործընթացի, որով երաշխավորվեց Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներիմասին միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրության հետագա ընդունումը: Այն ուժի մեջ մտավ 2013 թ. մայիսին՝ վերջապես անհատներին հնարավորություն տալով միջազգային մակարդակում բողոքարկել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների բոլոր ենթադրյալ խախտումները: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ենթադրյալ խախտումների առումով սա արդեն իսկ հնարավոր էր ավելի քան երեք տասնամյակ շարունակ՝ այն ժամանակից ի վեր, ինչ 1976 թ. մարտին

ուժի մեջ էր մտել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրությունը:

Վիեննայի խորհրդաժողովը հանգեցրեց նոր առաջխաղացումների: Կանանց իրավունքներն անվիճարկելիորեն և մեկընդմիշտ բոլորի համար ճանաչվեցին իբրև մարդու իրավունքներ: Վճռորոշ առաջընթաց արձանագրվեց անպատժելիության դեմ պայքարի հարցում, և հաստատվեց Միջազգային քրեական դատարան ստեղծելու բարենպաստ հնարավորությունը: Խորհրդաժողովն առաջարկեց ստեղծել Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոն. խորհրդաժողովից վեց ամսից էլ պակաս ժամանակ անց առաջարկությունը ստացավ Ընդհանուր վեհաժողովի համաձայնությունը: Արդյունքում ստեղծվեց Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, որը ներկայում հպարտորեն կառավարում եմ:

Վիեննայի հռչակագիրը դատապարտեց մարդու իրավունքների կոպիտ ու պարբերական խախտումները, որոնք շարունակվում էին աշխարհի շատ մասերում: Հռչակագրով առանձնացվեցին այնպիսի խախտումներ, ինչպիսիք են խոշտանգումներն ու դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, առանց դատական ընթացակարգերի և կամայական մահապատիժները, անհետացումները և կամայական ազատազրկումները. փաստաթուղթը ուշադրություն հրավիրեց ռասիզմի, ռասայական խտրականության և ապարտեիդի բոլոր ձևերի, օտարերկրյա բռնազավթման և օտար տիրապետության ու այլատյացություն վրա: Այն ընդգծեց աղքատությունը, սովը, կրոնական անհանդուրժողականությունը, ահաբեկչությունը և օրենքի գերակայության հաստատման ձախողումը:

Ամենաշոշափելի արդյունքներից մեկը աշխարհով մեկ մարդու իրավունքների ազգային հաստատությունների ճանաչումն էր որպես մարդու իրավունքների առաջմղման առանցքային անկախ մարմիններ: 1990-ականների սկզբին այսօրինակ հաստատությունների թիվը 10-ից պակաս էր. այսօր դրանք 101-ն են՝ միջազգայնորեն հավատարմագրված: Ոչ կառավարական կազմակերպությունների խաղացած կենտրոնական դերը խորհրդաժողովի տարբերանշանն էր: Այդ ժամանակից ի վեր քաղաքացիական հասարակությունը ծավալվել ու ընդլայնվել է, իսկ մարդու իրավունքներով զբաղվող ազգային ակտիվ կազմակերպությունների թիվը՝ բազմապատկվել: Այս իրավապաշտպանները մեր ժամանակի հերոսներն են, և մենք պետք է շարունակենք աջակցել նրանց՝ հակառակ ամեն կողմից նրանց սպառնացող վտանգների, ճնշումների և դիմադրության:

Վիեննայից ի վեր մենք հաջողության ենք հասել մարդու իրավունքները խաղաղության, անվտանգության և զարգացման վերաբերյալ գլոբալ քննարկումների առանցքում տեղակայելու հարցում: Մենք հետամուտ ենք եղել կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղաբնիկների, լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների, տրանսգենդեր և

միջսեռային անձանց (LGBTI), միգրանտների, փոքրամասնությունների և այլոց իրավունքների պաշտպանությանը: Մենք խթանել ենք կայուն խաղաղությունն ու զարգացումն այն երկրներում, որոնք հակամարտություններից և բռնատիրական ռեժիմից հետո վերականգնման փուլում են՝ թե՛ անցումային արդարադատության գործընթացը հնարավորինս ներառական, մասնակցային և թափանցիկ դարձնելու, թե՛ անպատժելիության դեմ պայքարի միջոցով: Մենք կառուցել ենք մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակ՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներով, այդ թվում՝ Մարդու իրավունքների խորհուրդը, դրա հատուկ ընթացակարգերը, շրջադարձային Պարբերական համապարփակ դիտարկումը և մարդու իրավունքների տասը պայմանագրային մարմինները:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում մենք ականատես ենք եղել զգալի առաջընթացի. սակայն անելիք դեռ շատ կա: Բոլոր մարդկանց իրավունքների և արժանապատվության նկատմամբ հարգանքի հասնելու խոստումը շարունակում է մեզ առաջ մղող ձգտում մնալ: Լուսանցքում հայտնված և խոցելի բազմաթիվ խմբեր և անհատներ շարունակում են մնալ ճնշված և մեկուսացված, նրանց ձայները՝ զսպված, իսկ իրավունքները՝ մերժված:

Մեր աշխատանքը շարունակվելու է՝ ոգեշնչվելով Վիեննայի հռչակագրով և Գործողությունների ծրագրով, մինչև որ դրանով ստանձնած պարտավորություններն իրական դառնան բոլորի համար:

Նավի Փիլեյ
Միավորված ազգերի կազմակերպության
Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատար

ՎԻԵՆՆԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը,

Նկատի առնելով, որ մարդու իրավունքների խթանումն ու պաշտպանությունը միջազգային հանրության առաջնահերթություններից է, և որ խորհրդաժողովը մարդու իրավունքների միջազգային համակարգի և մարդու իրավունքների պաշտպանության գործիքների համապարփակ վերլուծության եզակի հնարավորություն է ընձեռում՝ ընդլայնելու և այդպիսով առաջ մղելու այդ իրավունքների ավելի լիարժեք իրացումը՝ արդար և հավասարակշռված կերպով.

Ճանաչելով և հաստատելով, որ մարդու բոլոր իրավունքները բխում են մարդկային անհատականությանը հատուկ արժանապատվությունից, և որ մարդ-անհատը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների կենտրոնական առարկան է և, հետևաբար, պետք է լինի գլխավոր շահառուն ու ակտիվորեն մասնակցի այս իրավունքների և ազատությունների իրացմանը.

Վերահաստատելով իրենց հանձնառությունը՝ իրագործելու Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված նպատակներն ու սկզբունքները.

Վերահաստատելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության Հոդված 56-ի ներքո ստանձնած պարտավորությունը համատեղ և անջատ գործողություններ կատարելու վերաբերյալ՝ պատշաճորեն կարևորելով միջազգային համագործակցության հաստատումը հանուն Հոդված 56-ում սահմանված նպատակների իրականացման, այդ թվում՝ համընդհանուր հարգանք մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների նկատմամբ և դրանց պահպանում բոլորի համար.

Շեշտելով բոլոր պետությունների պարտավորությունները Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության ներքո՝ զարգացնելու և խրախոսելու հարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ բոլորի համար, առանց ռասայական, սեռական, լեզվական կամ կրոնական տարբերակման.

Վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության առաջաբանը, մասնավորապես վճռականությունը՝ վերահաստատելու հավատարմությունը մարդու հիմնարար իրավունքներին, մարդ անհատի արժանապատվությանը և արժեքին, կանանց ու տղամարդկանց և մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքներին.

Վկայակոչելով նաև Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության առաջաբանում արտահայտված վճռականությունը՝

հետագա սերունդներին զերծ պահելու պատերազմի արհավիրքից, հաստատելու պայմաններ, որոնց ներքո կարող են պահպանվել արդարությունն ու պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների նկատմամբ հարգանքը, խթանելու սոցիալական առաջընթացը և կյանքի ավելի լավ ստանդարտները՝ ավելի մեծ ազատության պայմաններում, կյանքի կոչելու հանդուրժողականություն և բարիդրացիական հարաբերություններ և գործադրելու միջազգային գործիքները՝ հանուն բոլոր ժողովուրդների համար տնտեսական և սոցիալական առաջխաղացման խթանման.

Ընդգծելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը բոլոր ժողովուրդների և պետությունների համար սահմանում է վերջնական արդյունքի ընդհանուր չափանիշ, ոգեշնչման աղբյուրն է և Միավորված ազգերի համար հիմք է հանդիսացել սահմանելու չափանիշներ, որոնք առկա են մարդու իրավունքների միջազգային գործող փաստաթղթերում, մասնավորապես՝ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում.

Նկատի առնելով միջազգային բեմահարթակում տեղի ունեցող խոշոր փոփոխությունները և բոլոր ժողովուրդների ձգտումները՝ հասնելու միջազգային այնպիսի իրավակարգի, որը հիմնված կլինի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքների վրա, այդ թվում՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի խթանումն ու խրախուսումը բոլորի համար և հարգանքը հավասար իրավունքների սկզբունքի ու ժողովուրդների ինքնորոշման, խաղաղության, ժողովրդավարության, արդարության, հավասարության, օրենքի գերակայության, բազմակարծության, զարգացման, ավելի բարվոք կենսապայմանների և համերաշխության նկատմամբ.

Խորապես մտահոգված լինելով, որ ամբողջ աշխարհում կանայք տարբեր եղանակներով շարունակում են ենթարկվել խտրականության և բռնության.

Գիտակցելով, որ մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի գործողությունները կատարելագործման և ընդլայնման կարիք ունեն՝ այս ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության մեխանիզմներն ամրապնդելու և մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանման նկատմամբ համընդհանուր հարգանքի խնդիրներն առաջ մղելու նպատակով.

Հաշվի առնելով Թունիսում, Սան Խոսեում և Բանգկոկում տեղի ունեցած տարածաշրջանային երեք հանդիպումների ընթացքում ընդունված հռչակագրերը և կառավարությունների կողմից կատարված ներդրումները ու նկատի ունենալով միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից կատարված առաջարկությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովի

նախապատրաստական փուլում անկախ փորձագետների կողմից իրականացված հետազոտությունները.

Ողջունելով 1993 թվականը Աշխարհի տեղաբնիկ ժողովուրդների միջազգային տարի հայտարարելը՝ որպես միջազգային հանրության հանձնառության վերահաստատում՝ ապահովելու նրանց կողմից մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելը և հարգելու նրանց մշակույթների և ինքնությունների արժեքն ու բազմազանությունը.

Գիտակցելով նաև, որ միջազգային հանրությունը պետք է ուղիներ և միջոցներ գտնի՝ առկա խոչընդոտները վերացնելու, մարդու բոլոր իրավունքների լիակատար իրացման մարտահրավերներին դիմակայելու և դրանցից բխող՝ ամբողջ աշխարհում մարդու իրավունքների շարունակվող խախտումները կանխելու նպատակով.

Դիմելով մեր դարաշրջանի ոգուն և ելնելով մեր ժամանակի իրողություններից, որոնք աշխարհի ժողովուրդներին և Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ-պետություններին կոչ են անում վերստին նվիրվել մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության համաշխարհային գործին՝ ապահովելով այս իրավունքների լիակատար ու համընդհանուր իրացումը.

Նպատակադրված լինելով նոր քայլեր ձեռնարկել միջազգային հանրության հանձնառությունների հարցում՝ ուղղված մարդու իրավունքների ոլորտում զգալի առաջընթացի հասնելուն՝ միջազգային համագործակցության և համերաշխության ավելի մեծ և տևական ջանքերի միջոցով.

Հանդիսավորապես ընդունում է Վիեննայի հռչակագիրն ու Գործողությունների ծրագիրը:

I

1. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է բոլոր պետությունների վսեմ հանձնառությունը՝ իրականացնելու բոլոր մարդկանց համար մարդու բոլոր իրավունքների և հիմնավոր ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքը և դրանց պաշտպանությունը խթանելու իրենց պարտավորությունները՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության, մարդու իրավունքներին վերաբերող այլ փաստաթղթերի և միջազգային իրավունքի: Այս իրավունքների և ազատությունների համընդհանուր բնույթը կասկածից վեր է:

Այս շրջանակում մարդու իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումն էական նշանակություն ունի Միավորված ազգերի կազմակերպության նպատակների լիակատար իրականացման տեսանկյունից:

Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները բոլոր մարդկանց ի ծնե իրավունքն են. դրանց պաշտպանությունն ու խթանումը կառավարությունների առաջնային պարտականությունն է:

2. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի հիման վրա նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն հետամուտ լինում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը:

Հաշվի առնելով գաղութային կամ օտարերկրյա այլ տեսակի տիրապետությունների տակ գտնվող ժողովուրդների առանձնակի իրավիճակը՝ Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է ժողովուրդների իրավունքը՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության ձեռնարկելու ցանկացած օրինակարգ գործողություն ինքնորոշման իրենց անօտարելի իրավունքը իրացնելու նպատակով: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ինքնորոշման իրավունքի ժխտումը համարում է մարդու իրավունքների խախտում և ընդգծում այս իրավունքի արդյունավետ իրագործման կարևորությունը:

Համաձայն Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համահունչ, ասվածը չի կարելի մեկնել որպես իրավազորում կամ խրախուսում որևէ գործողության, որը լիովին կամ մասնակիորեն կմասնատի կամ կվնասի ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը:

3. Պետք է ձեռնարկվեն միջազգային արդյունավետ միջոցառումներ, որպեսզի երաշխավորվի և մշտադիտարկվի օտարերկրյա օկուպացման ներքո գտնվող ժողովուրդների հետ կապված մարդու իրավունքների ստանդարտների իրականացումը, և պետք է ապահովվի արդյունավետ իրավական պաշտպանություն ընդդեմ նրանց մարդու իրավունքների ոտնահարումների՝ համաձայն մարդու իրավունքների նորմերի և միջազգային իրավունքի, մասնավորապես՝ 1949 թ. օգոստոսին ընդունված Պատերազմական ժամանակներում քաղաքացիական անձանց պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիայի, ինչպես նաև մարդասիրական իրավունքի այլ կիրառելի նորմերի:

4. Մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների խթանումն ու պաշտպանությունը պետք է համարվի Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթ խնդիրը՝ համաձայն կազմակերպության նպատակների և սկզբունքների, մասնավորապես՝ միջազգային համագործակցության նպատակի: Այս նպատակների և սկզբունքների շրջանակում մարդու բոլոր իրավունքների խթանումն ու պաշտպանությունը միջազգային հանրության օրինական մտահոգության առարկա է հանդիսանում: Մարդու իրավունքներին առնչվող օրգաններն ու մասնագիտացված հաստատությունները, հետևաբար, պետք է էլ ավելի մեծ ջանքեր գործադրեն իրենց գործողությունների համակարգման ուղղությամբ՝ հիմնվելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի հետևողական և օբյեկտիվ կիրառման վրա:

5. Մարդու բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի ու փոխադարձաբար կախված և փոխկապակցված: Միջազգային հանրությունը պետք է համաշխարհային մակարդակում մարդու իրավունքներին վերաբերվի արդարացի և հավասար կերպով, հավասար հիմունքներով և միևնույն շեշտադրմամբ: Թեպետ պետք է նկատի առնել ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները և տարբեր պատմական, մշակութային և կրոնական հիմքերը, պետությունների պարտականությունն է, անկախ քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից, խթանել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները:

6. Միավորված ազգերի կազմակերպության ջանքերը բոլորի համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի և դրանց պահպանման ուղղությամբ նպաստում են կայունությանն ու բարեկեցությանը, որոնք անհրաժեշտ են ազգերի միջև խաղաղ և բարեկամական հարաբերությունների համար, ինչպես նաև նպաստում են խաղաղության ու անվտանգության, սոցիալական և տնտեսական զարգացման համար պայմանների բարելավմանը՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համահունչ:

7. Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության գործընթացը պետք է իրականացվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության նպատակների ու սկզբունքների և միջազգային իրավունքի համաձայն:

8. Ժողովրդավարությունը, զարգացումը և հարգանքը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ փոխկախված են և փոխամրապնդող: Ժողովրդավարությունը հիմնված է մարդկանց ազատ կամարտահայտման վրա՝ որոշելու իրենց սեփական քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային համակարգերը, և կյանքի բոլոր ասպարեզներում նրանց լիակատար մասնակցության վրա: Վերոնշյալի համատեքստում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանումն ու պաշտպանությունն ազգային և միջազգային մակարդակներում պետք է լինեն համընդհանուր և իրականացվեն առանց պայմանների առաջադրման: Միջազգային հանրությունը պետք է աջակցի ժողովրդավարության, զարգացման և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանն ամբողջ աշխարհում:

9. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ ամենաքիչ զարգացած պետությունները, որոնք պատրաստակամ են ժողովրդավարացման և տնտեսական բարեփոխումների հարցում, և որոնցից շատերն Աֆրիկայում են, պետք է ստանան միջազգային հանրության աջակցությունը, որպեսզի հաջողության հասնեն դեպի ժողովրդավարություն և տնտեսական զարգացում անցման փուլում:

10. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը զարգացման իրավունքը վերահաստատում է որպես համընդհանուր և անօտարելի իրավունք և մարդու հիմնարար իրավունքների բաղկացուցիչ մաս, ինչպես ամրագրված է Զարգացման իրավունքի վերաբերյալ հռչակագրում:

Ինչպես ամրագրված է Զարգացման իրավունքի մասին հռչակագրում, մարդ անհատը զարգացման կենտրոնական սուբյեկտն է:

Թեպետ զարգացումը դյուրացնում է մարդու բոլոր իրավունքների իրացումը, զարգացման բացակայությունը չի կարող վկայակոչվել՝ արդարացնելու մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների սահմանափակումը: Պետությունները պետք է համագործակցեն միմյանց հետ զարգացման ապահովման և զարգացման խոչընդոտների վերացման հարցում: Միջազգային հանրությունը պետք է խթանի միջազգային արդյունավետ համագործակցություն՝ զարգացման իրավունքի իրացման և զարգացման խոչընդոտների վերացման նպատակով:

Զարգացման իրավունքի իրականացման ուղղությամբ տևական առաջընթացի համար անհրաժեշտ են զարգացման արդյունավետ քաղաքականություններ

ազգային մակարդակում, ինչպես նաև տնտեսական արդար հարաբերություններ և տնտեսական նպաստավոր միջավայր՝ միջազգային մակարդակում:

11. Զարգացան իրավունքը պետք է իրականացվի այնպես, որ արդարացիորեն բավարարվեն ներկա և ապագա սերունդների զարգացման և բնապահպանական կարիքները: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ընդունում է, որ թունավոր և վնասակար նյութերի և թափոնների ապօրինի հեռացումը լուրջ հնարավոր վտանգ է բոլոր մարդկանց կյանքի և առողջության իրավունքների նկատմամբ: Հետևաբար, Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը բոլոր Պետություններին կոչ է անում ընդունել և ակտիվորեն իրականացնել գոյություն ունեցող կոնվենցիաները, որոնք վերաբերում են թունավոր և վտանգավոր նյութերի և թափոնների հեռացմանը, և համագործակցել դրանց ապօրինի հեռացման կանխարգելման հարցում:

Յուրաքանչյուր ոք ունի գիտական առաջընթացից և դրա կիրառումներից օգտվելու իրավունք: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն արձանագրում է, որ որոշակի առաջխաղացումներ, հատկապես կենսաբժշկական և կենսաբանական գիտությունների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ասպարեզում, կարող են հնարավոր անբարենպաստ ազդեցություն ունենալ անհատի ամբողջության, արժանապատվության և մարդու իրավունքների առումով և կոչ է անում միջազգային համագործակցության՝ համընդհանուր մտահոգության այս ոլորտում մարդու իրավունքների և արժանապատվության նկատմամբ լիակատար հարգանքի ապահովման նպատակով:

12. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը միջազգային հանրությանը կոչ է անում բոլոր ջանքերը գործադրել՝ օգնելու մեղմել զարգացող երկրների արտաքին պարտքի բեռը, որպեսզի օժանդակություն ստանան այդ երկրների կառավարությունների ջանքերը՝ հասնելու իրենց բնակչության տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների լիակատար իրացման:

13. Հարկ է, որ Պետությունները և միջազգային կազմակերպությունները, ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցությամբ, բարենպաստ պայմաններ ստեղծեն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ ապահովելու մարդու իրավունքների լիակատար և արդյունավետ իրացումը: Պետությունները պետք է վերացնեն մարդու իրավունքների բոլոր խախտումներն ու դրանց պատճառները, ինչպես նաև այս իրավունքների իրացման հարցում առկա խոչընդոտները:

14. Լայնածավալ ծայրահեղ աղքատության գոյությունը խոչընդոտում է մարդու իրավունքների արդյունավետ իրացմանը. դրա անմիջական մեղմումը և վերջնական վերացումը պետք է շարունակեն մնալ միջազգային հանրության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

15. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումն առանց որևէ կարգի տարբերակման մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար կանոններից մեկն է: Ռասիզմի և ռասայական խտրականության, այլատյացության բոլոր ձևերի և դրա հետ կապված անհանդուրժողականության արագ և համակողմանի վերացումը միջազգային հանրության առաջնահերթ անելիքներից է: Կառավարությունները պետք է արդյունավետ միջոցառումներ ձեռնարկեն դրանք կանխելու և դրանց դեմ պայքարելու ուղղությամբ: Խմբերին, հաստատություններին, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին և անհատներին կոչ է արվում ավելացնել իրենց ջանքերը այս չարիքների դեմ ուղղված գործողությունների համակարգման և համագործակցելու հարցում:

16. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է ապարտեիդի կազմաքանդման հարցում արձանագրված առաջընթացը և միջազգային հանրությանն ու Միավորված ազգերի համակարգին կոչ անում աջակցել այս գործընթացում:

Մարդու իրավունքների միջազգային խորհրդաժողովը նաև ափսոսանք է հայտնում բռնության շարունակվող գործողությունների կապակցությամբ, որոնք ուղղված են ապարտեիդի խաղաղ կազմաքանդման ձգտումների խափանմանը:

17. Ահաբեկչության բոլոր ձևերի և դրսևորումների գործողությունները, մեթոդները և գործելակերպերը, ինչպես նաև որոշ երկրներում կապը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, գործունեություն է՝ ուղղված մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և ժողովրդավարության կործանմանը, ինչը վտանգում է պետությունների տարածքային ամբողջականությունը, անվտանգությունը, անկայունացնում օրինակարգորեն ձևավորված Կառավարությունները: Միջազգային հանրությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի համագործակցության ընդլայնման ուղղությամբ՝ ահաբեկչության կանխման և դրա դեմ պայքարի նպատակով:

18. Կանանց և աղջիկ երեխայի մարդու իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, բաղկացուցիչ և անբաժանելի մասն են: Ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում կանանց լիարժեք և հավասար մասնակցությունը և սեռի հիմքով խտրականության բոլոր ձևերի իսպառ վերացումը միջազգային հանրության առաջնահերթ խնդիրներից են:

Գենդերահեն բռնությունը և սեռական բռնության ու շահագործման բոլոր ձևերը, այդ թվում՝ նրանք, որ արդյունք են մշակութային նախապաշարման և միջազգային թրաֆիքինգի, անհամատեղելի են մարդ անհատի արժանապատվության և արժեքի հետ և պետք է վերացվեն: Սրան

կարելի է հասնել իրավական եղանակներով և ազգային մակարդակում գործողությունների ու միջազգային համագործակցության միջոցով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական զարգացումը, կրթությունը, ապահով մայրությունը և առողջապահությունն ու սոցիալական աջակցությունը:

Կանանց մարդու իրավունքները պետք է կազմեն Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գործունեության բաղկացուցիչ մասը, այդ թվում՝ կանանց առնչվող մարդու իրավունքների պաշտպանության բոլոր գործիքների առաջմղումը:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կառավարություններին, հաստատություններին, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին հորդորում է բազմապատկել իրենց ջանքերը՝ ի պաշտպանություն և խթանում կանանց և աղջիկ երեխաների մարդու իրավունքների:

19. Հաշվի առնելով փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանման և պաշտպանության կարևորությունը և այդօրինակ պաշտպանության և խթանման ներդրումը այն պետության քաղաքական և սոցիալական կայունության հարցում, որում բնակվում է տվյալ անձը՝

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է պետությունների պարտավորությունը՝ ապահովելու, որ փոքրամասնություններին պատկանող անձինք կարողանան լիարժեքորեն և արդյունավետորեն իրացնել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ առանց որևէ խտրականության և օրենքի առջև լիակատար հավասարության պայմաններում՝ համաձայն Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրի:

Փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն վայելելու իրենց սեփական մշակույթը, դավանելու և իրացնելու իրենց սեփական կրոնը և օգտագործելու իրենց սեփական լեզուն մասնավոր և հանրային կյանքում՝ ազատորեն և առանց միջամտության կամ խտրականության որևէ ձևի դրսևորման:

20. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է տեղաբնիկ ժողովուրդների ներհատուկ արժանապատվությունը և եզակի ներդրումը հասարակության զարգացման և բազմակարծության հարցում և վճռականորեն վերահաստատում է միջազգային հանրության պատրաստակամությունը՝ նպաստելու նրանց տնտեսական, սոցիալական և մշակութային բարեկեցությանն ու կայուն զարգացման պտուղները նրանց հասցնելուն: Պետությունները պետք է ապահովեն տեղաբնիկ ժողովուրդների

լիակատար և ազատ մասնակցությունը հասարակության բոլոր ոլորտներում, մասնավորապես՝ նրանց համար մտահոգության առարկա հանդիսացող հարցերում: Նկատի առնելով տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների խթանման և պաշտպանության կարևորությունը և այդօրինակ խթանման ու պաշտպանության նպաստը այն պետությունների քաղաքական և սոցիալական կայունության հարցում, որոնցում ապրում են այդ ժողովուրդները, Պետությունները պետք է, համաձայն միջազգային իրավունքի, կոնկրետ դրական քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու տեղաբնիկ ժողովուրդների մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումը հավասարության և խտրականության չենթարկվելու պայմաններում, և ճանաչեն նրանց տարբերվող ինքնության, մշակույթների և սոցիալական կազմակերպման արժեքն ու ինքնատիպությունը:

21. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, ողջունելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վաղ վավերացումը մեծ թվով Պետությունների կողմից և արձանագրելով, որ ճանաչում է Երեխաների հարցերով համաշխարհային գագաթաժողովում ընդունված Երեխաների գոյատևման, պաշտպանության և զարգացման հռչակագրով և Գործողությունների ծրագրով ամրագրված երեխաների մարդու իրավունքները, հորդորում է մասնակից Պետություններին մինչև 1995թ. վավերացնել Կոնվենցիան և լծվել դրա արդյունավետ իրականացման գործին՝ որդեգրելով բոլոր անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցները և կատարելով առկա ռեսուրսների առավելագույն չափով հատկացումներ: Երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում առաջնային նկատառումները պետք է լինեն խտրական պայմանների բացակայությունն ու երեխայի լավագույն շահերը, և երեխայի տեսակետներին պատշաճ կշիռ պետք է տրվի: Պետք է ամրապնդվեն ազգային և միջազգային մեխանիզմները՝ ուղղված երեխաների ֆիզիկական պահպանությանն ու պաշտպանությանը, մասնավորապես՝ աղջիկ երեխաների, լքված երեխաների, փողոցի երեխաների, տնտեսական և սեռական շահագործման ենթարկված երեխաների (այդ թվում՝ մանկական պոռնկագրության միջոցով), մանկական մարմնավաճառությունը կամ օրգանների վաճառքը, հիվանդությունների, այդ թվում ՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի զոհ հանդիսացող երեխաների, փախստական և տեղահանված երեխաների, ազատազրկման մեջ գտնվող երեխաների, զինված հակամարտությունների գոտում գտնվող երեխաների, ինչպես նաև սովի, երաշտի և արտակարգ այլ իրավիճակների զոհ հանդիսացող երեխաների: Պետք է խթանվեն միջազգային համագործակցությունն ու համերաշխությունը՝ աջակցելու Կոնվենցիայի իրականացմանը, և երեխայի իրավունքները պետք է առաջնահերթություն լինեն Միավորված ազգերի կազմակերպության ամբողջ համակարգում մարդու իրավունքների հարցերով գործողություններ ձեռնարկելիս:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև ընդգծում է, որ իր անհատականության լիարժեք և ներդաշնակ զարգացման համար երեխան պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, ինչը համապատասխանաբար շնորհում է ավելի մեծ պաշտպանություն:

22. Հարկ է հատուկ ուշադրություն հատկացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար ոչ խտրական պայմանների և նրանց կողմից իրենց բոլոր մարդկային իրավունքների ու հիմնարար ազատությունների հավասար իրացման ապահովմանը, այդ թվում՝ նրանց ակտիվ մասնակցությունը հասարակության բոլոր ոլորտներում:

23. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ յուրաքանչյուր ոք, առանց որևէ կարգի տարբերակման, ունի հետապնդման պատճառով այլ երկրներում ապաստան որոնելու և ստանալու, ինչպես նաև սեփական երկիր վերադարձի իրավունք: Այս առումով խորհրդաժողովն ընդգծում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1951 թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի, դրա 1967 թ. արձանագրության և տարածաշրջանային փաստաթղթերի կարևորությունը: Այն իր գնահատանքն է արտահայտում Պետություններին, որոնք շարունակում են ընդունել և իրենց տարածքում հյուրընկալել մեծ թվով փախստականների, ինչպես նաև Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին՝ իր առաջադրանքները նվիրումով իրականացնելու համար: Այն նաև բարձր է գնահատում Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականներին օգնության և աշխատանքի ՄԱԿ-ի գործակալության աշխատանքը:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է, որ մարդու իրավունքների կոպիտ խախտումները, այդ թվում՝ զինված հակամարտությունների ժամանակ, մարդկանց տեղահանությանը հանգեցնող բազմաթիվ և բազմաբարդ գործոններից են:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդունում է, որ նկատի առնելով փախստականների հարցում համաշխարհային ճգնաժամի բարդությունները և համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության, միջազգային առնչվող փաստաթղթերի և միջազգային համերաշխության ու ելնելով համատեղ պատասխանատվության ոգուց՝ հարկ է, որ միջազգային հանրությունը որդեգրի համակողմանի մոտեցում, մտահոգ երկրների և խնդրին առնչվող կազմակերպությունների համակարգմամբ և համագործակցությամբ, նկատի ունենալով Միավորված ազգերի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի մանդատը: Սա պետք է ներառի ռազմավարությունների մշակումը՝ ուշադրության առնելու փախստականների և այլ տեղահանված անձանց տեղաշարժերի հիմքում ընկած պատճառները և ազդեցությունները, արտակարգ իրավիճակներին

պատրաստվածության և արձագանքման մեխանիզմները, արդյունավետ պաշտպանության և օգնության տրամադրումը, մշտապես հիշելով կանանց և երեխաների հատուկ կարիքների մասին, ինչպես նաև տևական լուծումներ գտնելը, գլխավորապես՝ անվտանգ և արժանապատիվ կամավոր հայրենադարձության նախընտրելի լուծման միջոցով, այդ թվում այնպիսի լուծումներ, որոնք ընդունվել են փախստականների հարցերով միջազգային խորհրդաժողովների կողմից: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է պետությունների պարտականությունները, մասնավորապես երբ դրանք վերաբերում են ծագման երկրներին:

Համակողմանի մոտեցման լույսի ներքո Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ընդգծում է ներքին տեղահանված անձանց վերաբերող հարցերին, նաև միջկառավարական և մարդասիրական կազմակերպությունների միջոցով, հատուկ ուշադրություն հատկացնելու և տևական լուծումներ գտնելու կարևորությունը, ներառյալ՝ նրանց կամավոր և անվտանգ վերադարձն ու վերականգնումը: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության և մարդասիրական իրավունքի սկզբունքների՝ Մարդու իրավունքների միջազգային խորհրդաժողովը էլ ավելի է ընդգծում բոլոր բնական և մարդածին աղետների զոհերին մարդասիրական օգնության տրամադրման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

24. Մեծ կարևորություն պետք է տրվի այն անձանց մարդու իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը, ովքեր պատկանում են խոցելի վիճակում գտնվող խմբերին, այդ թվում՝ ներգաղթյալ աշխատավորներին, նրանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանը, և մարդու իրավունքների պաշտպանության գոյություն ունեցող գործիքների ամրապնդմանն ու առավել արդյունավետ կիրարկմանը: Պետությունները պարտականություն ունեն ազգային մակարդակում ստեղծելու և պահպանելու համարժեք միջոցներ, մասնավորապես կրթության, առողջապահության և սոցիալական աջակցության ոլորտներում, իրենց բնակչության խոցելի խմբերին պատկանող անձանց իրավունքների խթանման և պաշտպանության համար և ապահովելու նրանց այն ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հետաքրքրված են իրենց սեփական խնդիրների համար լուծումներ գտնելու հարցում:

25. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատում է, որ ծայրահեղ աղքատությունն ու սոցիալական մեկուսացումը մարդկային արժանապատվության խախտում են հանդիսանում, և որ անհրաժեշտ է հրատապ քայլեր ձեռնարկել՝ հասնելու ծայրահեղ աղքատության և դրա պատճառների ավելի լավ իմացության, այդ թվում՝ զարգացման խնդրի հետ կապված, խթանելու ամենաաղքատ խավերի մարդու իրավունքները և վերջ տալու ծայրահեղ աղքատությանն ու սոցիալական մեկուսացմանն

ու խթանելու սոցիալական առաջընթացի պտուղներից օգտվելու հնարավորությունը: Պետությունների համար կարևոր նշանակություն ունի զարկ տալ ամենաաղքատ մարդկանց մասնակցությանը իրենց բնակության համայնքում որոշումների կայացման գործընթացին, մարդու իրավունքների խթանմանը և ծայրահեղ աղքատության դեմ պայքարի ջանքերին:

26. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է մարդու իրավունքների փաստաթղթերի կոդիֆիկացումը, ինչը դինամիկ և զարգացող գործընթաց է, և հորդորում է մարդու իրավունքների պայմանագրերի համընդհանուր վավերացում կատարել: Բոլոր պետությունները խրախուսվում են միանալ միջազգային այս փաստաթղթերին: Բոլոր պետությունները խրախուսվում են խուսափել, հնարավորության սահմաններում, վերապահումների դիմելուց:

27. Յուրաքանչյուր պետություն պետք է լուծման արդյունավետ ուղիներ ապահովի՝ մարդու իրավունքների վերաբերյալ բողոքները կամ խախտումները փոխհատուցելու: Արդարադատության իրականացումը, ներառյալ իրավապահ համակարգը և դատախազական մարմինները ու, հատկապես, անկախ դատական և իրավական համակարգը՝ մարդու իրավունքների միջազգային գործիքներում պարունակվող կիրառելի ստանդարտներին ամբողջովին համահունչ, էական նշանակություն ունեն մարդու իրավունքների լիարժեք և առանց խտրականության իրացման հարցում և ժողովրդավարության ու կայուն զարգացման պարտադիր պայման են: Այս համատեքստում արդարադատության իրականացմամբ մտահոգ հաստատությունները պետք է պատշաճ ֆինանսավորում ունենան, և միջազգային հանրության կողմից պետք է ապահովվի ավելի բարձր մակարդակի եւ տեխնիկական, եւ ֆինանսական աջակցություն: Միավորված ազգերի կազմակերպության պարտքն է առաջնահերթության հիմունքներով կիրառել խորհրդատվական ծառայությունների հատուկ ծրագրեր՝ միտված արդարադատության իրականացման ուժեղ և անկախ համակարգին:

28. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը մտահոգություն է հայտնում մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումների կապակցությամբ, հատկապես՝ ցեղասպանության եղանակով, պատերազմական իրավիճակներում «էթնիկական զտումների» և կանանց համակարգչային բռնաբարությունների, փախստականների և տեղահանված անձանց զանգվածային արտագաղթի կազմակերպման կապակցությամբ: Խստորեն դատապարտելով այսօրինակ արգահատելի իրողությունները՝ այն վերստին կոչ է հնչեցնում, որ այսօրինակ հանցագործությունների մեղավորները պատժվեն, և այդ գործողություններն անհապաղ դադարեցվեն:

29. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խիստ մտահոգություն է հայտնում աշխարհի բոլոր մասերում մարդու իրավունքների խախտումների կապակցությամբ՝ ի ոտնահարում մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում և մարդասիրական իրավունքում ամրագրված չափանիշների, ինչպես նաև խախտումների զոհ հանդիսացող անձանց բավարար և արդյունավետ կերպով փոխհատուցելու եղանակների բացակայության կապակցությամբ:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խորապես մտահոգ է զինված հակամարտությունների ընթացքում մարդու իրավունքների խախտումների փաստով, որոնք ազդում են քաղաքացիական հասարակության, հատկապես կանանց, երեխաների, տարեց անձանց և հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Խորհրդաժողովը, հետևաբար, Պետություններին և զինված հակամարտությունների բոլոր կողմերին կոչ է անում խստորեն հավատարիմ մնալ միջազգային մարդասիրական իրավունքին, ինչպես սահմանված է 1949 թ. Ժնևի կոնվենցիաներով և միջազգային իրավունքի այլ կանոններով ու սկզբունքներով, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներին, որոնք ամրագրված են միջազգային կոնվենցիաներում: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է զոհերի իրավունքը՝ ստանալու մարդասիրական կազմակերպությունների աջակցությունը, ինչպես սահմանված է 1949 թ. Ժնևի կոնվենցիաներում և միջազգային մարդասիրական իրավունքի այլ առնչվող փաստաթղթերում, և կոչ է անում պայմաններ ստեղծել այսօրինակ աջակցության ապահով և ժամանակին տրամադրման համար:

30. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև մտահոգություն է հայտնում և դատապարտում, որ աշխարհի տարբեր մասերում շարունակում են տեղի ունենալ մարդու իրավունքների կոպիտ և համակարգային խախտումներ և ի հայտ գալ իրավիճակներ, որոնք լուրջ խոչընդոտ են հանդիսանում դրանց լիարժեք իրացման համար: Այսպիսի խախտումների և խոչընդոտների թվում են խոշտանգումը և դաժան, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը, առանց պատշաճ դատական ընթացակարգերի և կամայական մահապատիժները, անհետացումները, ապօրինի ազատազրկումները, ռասիզմի, ռասայական խտրականության և ապարտեիդի բոլոր ձևերը, օտարերկրյա բռնազավթումը և արտասահմանյան գերիշխանությունը, այլատյացությունը, աղքատությունը, քաղցը և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների այլ մերժումներ, կրոնական անհանդուրժողականությունը, ահաբեկչությունը, կանանց նկատմամբ խտրականությունը և օրենքի գերակայության բացակայությունը:

31. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Պետություններին կոչ է անում ձեռնպահ մնալ միակողմանի ցանկացած միջոցառումներից, որոնք չեն բխի միջազգային իրավունքի նորմերից և Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունից, որոնք խոչընդոտներ են ստեղծում Պետությունների միջև առևտրային հարաբերությունների հարցում և արգելակում մարդու իրավունքների լիակատար իրացումը՝ ամրագրված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ որ յուրաքանչյուր ունի իր առողջության և բարեկեցության համար համապատասխան կենսամակարդակի իրավունք, ներառյալ սնունդը և բուժօգնությունը, բնակարանը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատում է, որ սնունդը չպիտի օգտագործվի իբրև քաղաքական ճնշման գործիք:

32. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է մարդու իրավունքների խնդիրների դիտարկման համընդհանրությունը, օբյեկտիվությունը և ոչ ընտրողականությունն ապահովելու կարևորությունը:

33. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ ինչպես նախատեսված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով և մարդու իրավունքների միջազգային այլ գործիքներով, Պետությունները պարտավորություն են կրում ապահովելու, որ կրթությունը նպատակաուղղվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդմանը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը շեշտում է մարդու իրավունքների առարկան կրթական ծրագրերում ներգծելու կարևորությունը և պետություններին կոչ է անում վարվել համապատասխան ձևով: Կրթությունը պետք է խթանի պետությունների ու ռասայական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնման, հանդուրժողականության, խաղաղության և բարեկամական հարաբերությունների արժեքները և խրախուսի Միավորված ազգերի կազմակերպության գործունեության զարգացումը՝ ի իրականացում այս խնդիրների: Հետևաբար, մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը և ինչպես տեսական, այնպես էլ գործնական պատշաճ տեղեկությունների տարածումը կարևոր դեր են խաղում մարդու իրավունքների խթանման և պահպանման հարցում, բոլոր անհատների պարագայում, առանց որևէ կարգի տարբերակման, մասնավորապես՝ ռասայական, սեռի, լեզվական կամ կրոնական, և սա ազգային, ինչպես նաև միջազգային մակարդակներում պետք է ինտեգրվի կրթական քաղաքականություններում: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը արձանագրում է, որ ռեսուրսների

սահմանափակ լինելը և ինստիտուցիոնալ անհամապատասխանությունները կարող են արգելակել այս խնդիրների անհապաղ իրականացումը:

34. Ավելի մեծ ջանքեր պետք է գործադրել՝ աջակցելու, որպեսզի օգնություն հայցող երկրները ստեղծեն այնպիսի պայմաններ, որ յուրաքանչյուր անհատ կարողանա օգտվել մարդու համընդհանուր իրավունքներից և հիմնարար ազատություններից: Կառավարությունների, Միավորված ազգերի կազմակերպության համակարգի, ինչպես նաև բազմակողմ այլ կազմակերպությունների առջև կանգնած է հրամայական՝ զգալիորեն մեծացնելու այն ծրագրերին տրամադրվող միջոցները, որոնք ուղղված են ազգային օրենսդրության, ազգային հաստատությունների և առնչվող ենթակառուցվածքների ստեղծմանն ու ամրապնդմանը, որոնք աջակցում են իրավունքի գերիշխանության և ժողովրդավարության, ընտրական գործընթացների կայացմանը, վերապատրաստման, ուսուցման և կրթության միջոցով մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, հանրային մասնակցությանը և քաղաքացիական հասարակությանը:

Մարդու իրավունքների կենտրոնի ներքո գործող խորհրդատվական ծառայությունների ու տեխնիկական համագործակցության ծրագրերը պետք է ուժեղացվեն, ինչպես նաև դարձվեն ավելի արդյունավետ ու թափանցիկ և այդպիսով դառնան մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը բարելավող խոշոր ներդրում: Պետություններին կոչ է արվում մեծացնել իրենց ներդրումն այս ծրագրերում՝ թե Միավորված ազգերի կազմակերպության մշտական բյուջեից ավելի մեծ հատկացումների խթանման, և թե կամավոր ներդրումների միջոցով:

35. Միավորված ազգերի կազմակերպության գործունեությունը՝ ուղղված մարդու իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը, պետք է արտացոլի այն մեծ կարևորությունը, որ մարդու իրավունքներին հատկացված է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ, և Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքներին վերաբերող գործունեության պահանջներով, ինչպես լիազորված է անդամ պետությունների կողմից: Այս նպատակով Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքներին նվիրված գործունեության համար պետք է հատկացվեն ավելի մեծ միջոցներ:

36. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է այն կարևոր և կառուցողական դերը, որ խաղում են ազգային հաստատությունները հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության, մասնավորապես իշխանության իրավասու մարմիններին խորհրդատվական ծառայություններ մատուցելու իրենց կարողությամբ, մարդու իրավունքների խախտումների դիմաց փոխհատուցելու իրենց դերով,

մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկություններ տարածելով և մարդու իրավունքների վերաբերյալ կրթությամբ:
Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խրախուսում է ազգային հաստատությունների ստեղծումն ու ամրապնդումը՝ հաշվի առնելով «Ազգային հաստատությունների կարգավիճակի վերաբերյալ սկզբունքները» և ճանաչելով, որ պետության իրավունքն է ընտրել այն շրջանակը, որն առավելագույնս համապատասխանում է ազգային մակարդակում իր կոնկրետ կարիքներին:

37. Տարածաշրջանային կառույցները հիմնարար դեր են խաղում մարդու իրավունքների խթանման և պաշտպանության հարցում: Դրանք պետք է ամրապնդեն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում ամրագրված մարդու իրավունքների չափանիշները և դրանց պաշտպանությունը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատում է իրականացվող ջանքերը՝ ուղղված այս միջոցառումների ամրապնդմանը և դրանց արդյունավետության մեծացմանը, միևնույն ժամանակ շեշտելով Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների վերաբերյալ գործողությունների հետ համագործակցելու կարևորությունը:

Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հիշեցնում է, որ հարկ է դիտարկել տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կառույցների ստեղծման հնարավորությունը՝ հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության այն վայրերում, որտեղ դրանք դեռևս գոյություն չունեն:

38. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է ոչ կառավարական կազմակերպությունների կարևոր դերը մարդու բոլոր իրավունքների խթանման և ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում մարդասիրական գործողությունների հարցում: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը բարձր է գնահատում նրանց ներդրումը մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման, այս ոլորտում կրթության, վերապատրաստման և հետազոտությունների իրականացման և մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության հարցում: Ընդունելով հանդերձ, որ ստանդարտների սահմանման հիմնական պատասխանատվությունը կրում են Պետությունները՝ խորհրդաժողովը միաժամանակ բարձր է գնահատում ոչ կառավարական կազմակերպությունների ներդրումն այս գործընթացում: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը շեշտում է կառավարությունների և ոչ կառավարական կազմակերպությունների միջև շարունակական երկխոսության կարևորությունը: Ոչ կառավարական կազմակերպություններն ու դրանց անդամները, որոնք իրապես

ներգրավված են մարդու իրավունքների ոլորտում, պետք է օգտվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ճանաչված իրավունքներից ու ազատություններից և ազգային օրենսդրության պաշտպանությունից: Այս իրավունքներն ու ազատությունները չեն կարող իրացվել ի հակառակ Միավորված ազգերի կազմակերպության նպատակների և սկզբունքների: Ոչ կառավարական կազմակերպությունները պետք է ազատ լինեն՝ իրականացնելու մարդու իրավունքներին նվիրված իրենց գործունեությունը՝ առանց միջամտության, ազգային օրենսդրության և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի շրջանակներում:

39. Ընդգծելով մարդու իրավունքների և մարդասիրական հարցերի վերաբերյալ օբյեկտիվ, պատասխանատու և անկողմնակալ տեղեկությունների կարևորությունը՝ Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խրախուսում է լրատվամիջոցների ավելի մեծ մասնակցությունը, որոնց ազատությունը և պաշտպանությունը պետք է երաշխավորվի ազգային օրենսդրության շրջանակներում:

II

Ա. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԵԾԱՑՈՒՄ

1. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում մեծացնել համակարգումը՝ ի աջակցություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների: Այս նպատակով Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հորդորում է Միավորված ազգերի կազմակերպության օրգաններին, մարմիններին և մասնագիտացված գործակալություններին, որոնց գործունեությունն անդրադառնում է մարդու իրավունքներին, համագործակցել՝ ամրապնդելու, կատարելագործելու և ընդհանուր հուն փոխադրելու իրենց գործողությունները՝ հաշվի առնելով անհարկի համընկնումներից խուսափելու անհրաժեշտությունը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև առաջարկում է Գլխավոր քարտուղարին, որ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինների և մասնագիտացված գործակալությունների բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց տարեկան հավաքի ժամանակ իրենց գործողությունները համակարգելուց զատ նաև գնահատեն իրենց ռազմավարությունների և քաղաքականությունների ազդեցությունը մարդու բոլոր իրավունքների իրացման հարցում:

2. Ավելին, Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում տարածաշրջանային կազմակերպություններին և միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական ու զարգացման ակնառու հաստատություններին՝ գնահատելու նաև իրենց քաղաքականությունների ու ծրագրերի ազդեցությունը մարդու իրավունքների իրացման վրա:

3. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ճանաչում է, որ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի համապատասխան մասնագիտացված գործակալությունները և մարմիններն ու հաստատությունները, ինչպես նաև առնչվող միջկառավարական կազմակերպությունները, որոնց գործունեությունն անդրադառնում է մարդու իրավունքներին, իրենց համապատասխան մանդատների շրջանակներում կենսական դեր են կատարում մարդու իրավունքների ստանդարտների ձևավորման, խթանման և իրականացման հարցում և պետք է իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում հաշվի առնեն Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովի արդյունքները:

4. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վճռականորեն առաջարկում է, որ համաձայնեցված ջանքեր գործադրվեն Միավորված ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներում ընդունված մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի և արձանագրությունների վավերացման և դրանց միանալու գործընթացը խրախուսելու և օժանդակելու ուղղությամբ՝ դրանց համընդհանուր ընդունման նպատակով: Գլխավոր քարտուղարը, խորհրդակցելով պայմանագրային մարմինների հետ, պետք է դիտարկի մարդու իրավունքների այս պայմանագրերին չմիացած պետությունների հետ երկխոսություն բացելու հարցը՝ պարզելու խոչընդոտող հանգամանքները և դրանց հաղթահարման ուղիներ փնտրելով:

5. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Պետություններին խրախուսում է դիտարկել մարդու իրավունքների փաստաթղթերին միանալիս ցանկացած վերապահումների չափը սահմանափակելու հարցը, ցանկացած վերապահում ձևակերպել հնարավորինս ճշգրտորեն և նեղ, ապահովել, որ դրանցից ոչ մեկն անհամատեղելի չլինի համապատասխան պայմանագրի առարկային և նպատակին և պարբերաբար վերանայել վերապահումները՝ դրանցից հրաժարվելու նկատառումով:

6. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, ճանաչելով միջազգային առկա ստանդարտների բարձր որակին համապատասխանության ապահովման և մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի թվի անհարկի մեծացումից խուսափելու անհրաժեշտությունը՝ վերահաստատում է 1986 թ. Ընդհանուր վեհաժողովի կողմից ընդունված 41/120 բանաձևում առկա միջազգային նոր գործիքների մշակմանը վերաբերող ուղեցույցները և Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մարմիններին կոչ անում միջազգային նոր ստանդարտներ մշակելիս նկատի առնել այս ուղեցույցները, խորհրդակցել մարդու իրավունքների պայմանագրային մարմինների հետ և քարտուղարությանը խնդրել առաջարկվող նոր գործիքների տեխնիկական վերանայում կատարել:

7. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ երբ և որտեղ անհրաժեշտ է, Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային գրասենյակներում նշանակվեն մարդու իրավունքների հարցերով զբաղվող պաշտոնյաներ՝ տեղեկությունների տարածման և, խնդրով մտահոգ անդամ Պետությունների խնդրանքի պարագայում, մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման դասընթացներ ու այլ տեխնիկական օժանդակություն առաջարկելու նպատակով: Պետք է կազմակերպվի մարդու իրավունքների դաշտում գործելու առաքելությամբ նշանակվող միջազգային քաղաքացիական ծառայողների վերապատրաստում մարդու իրավունքների վերաբերյալ:

8. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է մարդու իրավունքների հանձնաժողովի արտահերթ նստաշրջանների գումարումը՝ որպես դրական նախաձեռնություն, և կոչ անում, որ մարդու իրավունքների կոպիտ խախտումներին արձագանքելու այլ եղանակներ դիտարկվեն Միավորված ազգերի կազմակերպության այլ համապատասխան օրգանների կողմից:

Ռեսուրսներ

9. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, մտահոգ լինելով Մարդու իրավունքների կենտրոնի գործողությունների և դրանց իրականացման համար առկա մարդկային, ֆինանսական ու այլ միջոցների անհամապատասխանության փաստով և նկատի առնելով Միավորված ազգերի կազմակերպության այլ կարևոր ծրագրերի համար անհրաժեշտ ռեսուրսները, խնդրանքով դիմում է Գլխավոր քարտուղարին և Ընդհանուր վեհաժողովին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել մարդու իրավունքների ծրագրին հատկացվող ռեսուրսներն էապես մեծացնելու ուղղությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության առկա և ապագա կանոնավոր բյուջեից, և հրատապ քայլեր ձեռնարկել ավելի մեծ արտաբյուջետային միջոցներ փնտրելու ուղղությամբ:

28 **10.** Այս շրջանակում կանոնավոր բյուջեն հարաճուն համամասնությամբ պետք է հատկացվի ուղղակիորեն Մարդու իրավունքների կենտրոնին՝ հոգալու համար վերջինիս ծախսերը և Մարդու իրավունքների կենտրոնի բոլոր այլ ծախսերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մարմիններին առնչվող: Կենտրոնի տեխնիկական համագործակցության գործողությունների կամավոր ֆինանսավորումը պետք է լրացնի այս ընդլայնված բյուջեն: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում առատաձեռն ներդրումներ կատարել գոյություն ունեցող հավատարմագրային կառավարման (տրաստային) հիմնադրամներում:

11. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խնդրանքով դիմում է Գլխավոր քարտուղարին և Ընդհանուր վեհաժողովին՝ Մարդու իրավունքների կենտրոնին ապահովելու բավարար մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսներով, որպեսզի այն հնարավորություն ունենա արդյունավետորեն, բարձր օգտակարությամբ և արագորեն իրականացնել իր գործունեությունը:

12. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, արձանագրելով, որ անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների ոլորտում գործողությունների համար մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայությունը, ինչպես լիազորված է միջկառավարական մարմինների կողմից, հորդորում է Գլխավոր քարտուղարին, համաձայն Միավորված

ազգերի կազմակերպության Կանոնադրության հոդված 101-ի, և անդամ Պետություններին՝ որդեգրել համաձայնեցված մոտեցում՝ ապահովելու, որ Քարտուղարությանը հատկացվեն ընդլայնված մանդատին համապատասխան ռեսուրսներ: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Գլխավոր քարտուղարին հրավիրում է դիտարկել, թե արդյոք անհրաժեշտ կամ օգտակար է ճշգրտումներ կատարել ծրագրային բյուջեի շրջափուլի ընթացակարգերում՝ ապահովելու մարդու իրավունքների իրացմանն ուղղված, անդամ Պետությունների կողմից լիազորված գործողությունների իրականացումը:

Մարդու իրավունքների կենտրոն

13. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կենտրոնի հզորացման կարևորությունը:

14. Մարդու իրավունքների կենտրոնը պետք է կարևոր դերակատարում ունենա ողջ համակարգում մարդու իրավունքների նկատմամբ ուշադրությունը համակարգելու հարցում: Կենտրոնի առանցքային դերը լավագույնս կարող է կենսագործվել, եթե այն հնարավորություն ստանա լիարժեքորեն համագործակցելու Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմինների և օրգանների հետ: Մարդու իրավունքների կենտրոնի համակարգող դերը նաև ենթադրում է Կենտրոնի՝ Նյու Յորքում գտնվող գրասենյակի ուժեղացում:

15. Մարդու իրավունքների կենտրոնը պետք է ապահովվի համապատասխան միջոցներով՝ թեմատիկ և երկրների զեկուցողների, փորձագետների, աշխատանքային խմբերի և պայմանագրային մարմինների համակարգի համար: Մարդու իրավունքների հանձնաժողովի դիտարկման առաջնահերթ հարցերից պետք է դառնա առաջարկությունների իրականացմանը հետամուտ լինելը:

16. Մարդու իրավունքների կենտրոնը պետք է ավելի մեծ դեր հանձն առնի մարդու իրավունքների խթանման հարցում: Այս դերը պետք է ձևավորվի անդամ պետությունների հետ համագործակցության միջոցով և խորհրդատվական ծառայությունների ու տեխնիկական աջակցության ընդլայնված ծրագրով: Այս նպատակով հարկ կլինի էապես ընդլայնել գոյություն ունեցող կամավոր հիմնադրամները և մեծացնել դրանց կառավարման ծախսարդյունավետությունն ու համակարգման մակարդակը: Բոլոր գործողությունները պետք է իրականացվեն ըստ ծրագրի կառավարման խիստ և թափանցիկ կանոնների, և պարբերաբար կերպով պետք կատարվեն ծրագրի և նախագծի գնահատումներ: Այս նպատակով այսօրինակ գնահատման արդյունքները և այլ առնչվող տեղեկությունները պետք է կանոնավոր կերպով հասանելի դարձվեն:

Կենտրոնը պետք է, մասնավորապես, տարեկան նվազագույնը մեկ անգամ կազմակերպի տեղեկատվական հանդիպումներ, որոնք բաց կլինեն բոլոր անդամ Պետությունների և այս նախագծերում ու ծրագրերում ուղղակիորեն ներգրավված կազմակերպությունների համար:

Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մեխանիզմների ադապտացում և ամրապնդում, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի կառույցի հիմնադրման հարցը

17. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ճանաչում է Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մեխանիզմների՝ մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ներկա և ապագա կարիքներին շարունակական հարմարեցման անհրաժեշտությունը, ինչպես արտացոլված է ներկա Հռչակագրում և բոլոր ժողովուրդների հավասարակշռված և կայուն զարգացման իրավական շրջանակում: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների օրգանները պետք է բարելավեն իրենց համակարգումը, ծախսարդյունավետությունը և արդյունավետությունը:

18. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է Ընդհանուր վեհաժողովին, որ վերջինս իր քառասունութերորդ նստաշրջանում Խորհրդաժողովի զեկույցը քննության առնելիս սկսի, առաջնահերթության կարգով, դիտարկել Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հիմնադրման հարցը՝ հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության:

Բ. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռասիզմ, ռասայական խտրականություն, այլատյացություն և անհանդուրժողականության այլ ձևեր

19. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ռասիզմի և ռասայական խտրականության վերացումը, մասնավորապես՝ դրանց ինստիտուցիոնալացված ձևերը, ինչպիսին է ապարտեիդը, կամ՝ որպես ռասայական գերակայության կամ բացառիկության ուսմունքների հետեւանք, կամ ռասիզմի ժամանակակից ձևերն ու ռասիզմի դրսևորումները, համարում է միջազգային հանրության առաջնահերթ խնդիրը և մարդու իրավունքների ոլորտում առաջմղման աշխարհով մեկ ծավալվող ծրագիր: Միավորված ազգերի կազմակերպության օրգաններն ու գործակալությունները պետք է ամրապնդեն իրենց ջանքերը՝ իրականացնելու գործողության մի այնպիսի

ծրագիր, որը կապված կլինի ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի երրորդ տասնամյակի հետ, ինչպես նաև ամրապնդեն նույն նպատակին ծառայող իրենց համապատասխան լիազորությունները: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատակամորեն դիմում է միջազգային հանրությանը՝ մեծահոգաբար ներդրումներ կատարել Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի գործողությունների տասնամյակի ծրագրի հավատարմագրային հիմնադրամում:

20. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը բոլոր կառավարություններին հորդորում է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել և խիստ քաղաքականություններ մշակել՝ կանխելու ռասիզմի, այլատյացության կամ առնչվող անհանդուրժողականության բոլոր ձևերն ու դրսևորումները և պայքարելու դրանց դեմ, անհրաժեշտության դեպքում համապատասխան օրենսդրության կիրարկմամբ, այդ թվում՝ պատժի միջոցառումները, և հիմնադրելով այս երևույթների դեմ պայքարի ազգային հաստատություններ:

21. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է մարդու իրավունքների հանձնաժողովի որոշումը՝ ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և առնչվող անհանդուրժողականության ժամանակակից ձևերի հարցով Հատուկ զեկուցողի նշանակման մասին: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը միաժամանակ դիմում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի մասնակից բոլոր պետություններին՝ դիտարկելու Կոնվենցիայի հոդված 14-ով նախատեսված հռչակագրի մշակման հարցը:

22. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կառավարություններին կոչ է անում բոլոր պահանջվող միջոցառումները ձեռնարկել համաձայն իրենց միջազգային պարտավորությունների և պատշաճ ուշադրություն հատկացնելով իրենց համապատասխան իրավական համակարգերին՝ հակազդելու անհանդուրժողականությանը և առնչվող բռնություններին կրոնական կամ հավատքի հիմքի վրա, այդ թվում՝ խտրականության դրսևորումները կանանց դեմ և ներառյալ կրոնական վայրերի սրբապղծումը, ճանաչելով, որ յուրաքանչյուր անհատ ունի մտքի, խղճի, արտահայտման և կրոնի ազատության իրավունք: Խորհրդաժողովը նաև հրավիրում է բոլոր պետություններին գործնականում կենսագործել Անհանդուրժողականության և կրոնական կամ հավատքի հիմքով խտրականության բոլոր ձևերի վերացան մասին հռչակագրի դրույթները:

23. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը շեշտում է, որ բոլոր անձինք, ովքեր գործում կամ թույլ են տալիս գործել էթնիկական զտումների հետ կապված քրեական արարքներ, անձամբ պատասխանատու են և հաշվետու մարդու իրավունքների այսօրինակ խախտումների համար, և որ միջազգային համայնքը պետք է ցանկացած ջանք գործադրի՝

արդարադատությանը հանձնելու այսօրինակ խախտումների համար իրավական տեսակետից պատասխանատու անձանց:

24. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը բոլոր պետություններին կոչ է անում անհապաղ անհատական կամ խմբակային միջոցառումներ ձեռնարկել՝ պայքարելու էթնիկական զտումների պրակտիկայի դեմ՝ դրան արագորեն վերջ տալու նպատակով: Էթնիկական զտումների արգահատելի պրակտիկայի զոհերն ունեն պատշաճ և արդյունավետ փոխհատուցման իրավունք:

2. Էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձինք

25. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Մարդու իրավունքների հանձնաժողովին կոչ է անում քննության առնել փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանման և պաշտպանության ուղիներն ու միջոցները, ինչպես որ սահմանված է Ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրով: Այս համատեքստում Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում Մարդու իրավունքների կենտրոնին խնդրով մտահոգ կառավարությունների խնդրանքով և որպես խորհրդատվական ծառայությունների ու տեխնիկական աջակցության իրենց ծրագրի մաս որակյալ փորձագիտական եզրակացություններ տրամադրել փոքրամասնության հարցերի և մարդու իրավունքների, ինչպես նաև վեճերի կանխարգելման ու կարգավորման վերաբերյալ՝ աջակցելու փոքրամասնություններին առնչվող առկա կամ հնարավոր իրավիճակներում:

26. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հորդորում է խթանել և պաշտպանել էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց մարդու իրավունքները՝ համաձայն Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրի:

27. Ձեռնարկման ենթակա միջոցառումները, երբ տեղին է, պետք է ներառեն օժանդակություն՝ ուղղված նրանց լիարժեք մասնակցությանը հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրոնական և մշակութային կյանքի բոլոր տիրույթներում և իրենց երկրի տնտեսական առաջընթացի ու զարգացման գործում:

Տեղաբնիկ ժողովուրդներ

28. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում Փոքրամասնությունների դեմ խտրականության կանխարգելման և նրանց պաշտպանության հարցերով ենթահանձնաժողովի Տեղաբնիկ բնակչության հարցերով աշխատանքային խմբին՝ իր տասնմեկերորդ նստաշրջանում ավարտել տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ հռչակագրի նախագծի մշակման աշխատանքները:

29. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Մարդու իրավունքների հանձնաժողովը տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագրի նախագծի վերջնական տարբերակի մշակումից հետո դիտարկի Տեղաբնիկ բնակչության հարցերով աշխատանքային խմբի մանդատի թարմացման հարցը:

30. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև առաջարկում է, որ Միավորված ազգերի կազմակերպության համակարգում խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական աջակցության ծրագրերը դրականորեն արձագանքեն օգնության հարցով Պետությունների խնդրանքներին, ինչից ուղղակիորեն կշահեն տեղաբնիկ ժողովուրդները: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն այնուհետև առաջարկում է, որ մարդկային ու ֆինանսական համարժեք ռեսուրսներ տրամադրվեն Մարդու իրավունքների կենտրոնին՝ Կենտրոնի գործունեության ամրապնդման ընդհանուր խնդրի շրջանակներում, ինչպես որ նախատեսված է սույն փաստաթղթով:

31. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հորդորում է ապահովել տեղաբնիկ ժողովուրդների լիարժեք և ազատ մասնակցությունը հասարակության բոլոր ոլորտներում, մասնավորապես իրենց համար մտահոգության առարկա հանդիսացող հարցերում:

32. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Ընդհանուր վեհաժողովը հայտարարի աշխարհի տեղաբնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակ՝ սկսած 1994 թ. հունվարից, ներառելով գործողություններին միտված ծրագրերը, որոնք կորոշվեն տեղաբնիկ ժողովուրդների հետ գործակցությամբ: Այս նպատակով պետք է ստեղծվի համապատասխան կամավոր հավատարմագրային կառավարման (տրաստային) հիմնադրամ: Այս տասնամյակի շրջանակներում պետք է դիտարկվի Միավորված ազգերի կազմակերպության համակարգում տեղաբնիկ ժողովուրդների մշտական ֆորումի ստեղծման հարցը:

Միգրանտ աշխատավորներ

33. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հորդորում է բոլոր պետություններին՝ երաշխավորել բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց մարդու իրավունքների պաշտպանությունը:

34. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը համարում է, որ հատուկ կարևորություն ունի այնպիսի պայմանների ստեղծումը, երբ կխթանվի ավելի մեծ ներդաշնակություն և հանդուրժողականություն միգրանտ աշխատավորների և այն պետության հասարակության մնացյալ մասի միջև, որտեղ նրանք ապրում են կողք կողքի:

35. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հրավիրում է դիտարկել հնարավոր ամենավաղ ժամկետներում Բոլոր միգրանտների ու նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի ստորագրման և վավերացման հնարավորությունը:

3. Կանանց հավասար կարգավիճակը և նրանց մարդու իրավունքները

36. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատակամորեն կոչ է անում կանանց կողմից իրենց մարդկային բոլոր իրավունքներից լիարժեքորեն և հավասար կերպով օգտվելու հնարավորության ստեղծման, և որ սա առաջնահերթություն լինի Կառավարությունների ու Միավորված ազգերի կազմակերպության համար: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև ընդգծում է զարգացման գործընթացում կանանց ինտեգրման և լիարժեք մասնակցության կարևորությունը՝ որպես եւ գործակալներ, եւ շահառուներ, ու վերահաստատում այն խնդիրները, որ սահմանվել են հանուն կանանց համաշխարհային գործողության շրջանակներում՝ ուղղված կայուն և արդարացի զարգացմանը, ինչպես որ սահմանված է Շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի հռչակագրով և Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ խորհրդաժողովի (Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա, հունիսի 3-14, 1992 թ.) կողմից ընդունված «Օրակարգ 21»-ի բաժին 24-ում:

37. Կանանց հավասար կարգավիճակի և նրանց մարդու իրավունքների հարցերը պետք է ինտեգրվեն Միավորված ազգերի կազմակերպության ամբողջ համակարգի գործունեության հիմնական ուղղությունում: Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինները և մեխանիզմները պետք է կանոնավոր և համակարգային կերպով անդրադառնան այս հարցերին: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվեն՝ ընդլայնելու համագործակցությունը և խթանելու հետագա ինտեգրումը

Կանանց կարգավիճակի վերաբերյալ հանձնաժողովի, Մարդու իրավունքների հանձնաժողովի, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի, Միավորված ազգերի կանանց զարգացման հիմնադրամի, Միավորված ազգերի զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների միջև: Այս համատեքստում պետք է ամրապնդվի համագործակցությունը և համակարգումը Մարդու իրավունքների կենտրոնի և Կանանց առաջխաղացման բաժանմունքի միջև:

38. Մասնավորապես, Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է հանրային և մասնավոր կյանքում կանանց նկատմամբ բռնության, սեռական բռնության բոլոր ձևերի, կանանց շահագործման և թրաֆիքինգի վերացման, արդարադատություն իրականացնելիս գենդերային հիմքով կողմնակալությունից զերծ մնալու և կանանց իրավունքների ու որոշակի ավանդութային ու սովորութային իրողությունների, մշակութային նախապաշարումների և կրոնական ծայրահեղականության միջև ցանկացած կոնֆլիկտ արմատախիլ անելու ուղղությամբ աշխատելու կարևորությունը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Ընդհանուր վեհաժողովին կոչ է անում ընդունել կանանց նկատմամբ բռնության մասին հռչակագրի նախագիծը և պետություններին հորդորում պայքարել կանանց նկատմամբ բռնության երևույթի դեմ՝ համաձայն հռչակագրի դրույթների: Կանանց մարդու իրավունքների խախտումները զինված հակամարտությունների իրավիճակներում հանդիսանում են մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի միջազգային հիմնարար սկզբունքների խախտում: Այս կարգի բոլոր խախտումները, այդ թվում, մասնավորապես, սպանությունը, պարբերական բռնաբարությունը, սեռական հարկադրված աշխատանքը և ստիպողական հղիությունը պահանջում են հատկապես արդյունավետ արձագանքում:

39. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հաստատակամորեն կոչ է անում արմատախիլ անել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը՝ ինչպես թաքնված, այնպես էլ բացահայտ: Միավորված ազգերի կազմակերպությունը պետք է խրախուսի մինչև 2000 թվականը բոլոր Պետությունների կողմից Կանանց նկատմամբ խտրականության բոլոր տեսակների վերացման մասին կոնվենցիան վավերացնելու նպատակը: Պետք է խրախուսվեն կոնվենցիայի վերաբերյալ արված հատկապես մեծաթիվ վերապահումների լուծման ուղիներն ու միջոցները: Ի թիվս այլոց, Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն պետք է շարունակի Կոնվենցիայի վերաբերյալ վերապահումների ուսումնասիրությունը: Պետություններին կոչ է արվում հետ վերցնել իրենց այն վերապահումները, որոնք հակասում են Կոնվենցիայի առարկային կամ նպատակին, կամ որոնք այլապես անհամատեղելի են միջազգային պայմանագրային իրավունքի հետ:

40. Պայմանագրային մշտադիտարկման մարմինները պետք է անհրաժեշտ տեղեկություններ տարածեն՝ կանանց հնարավորություն տալու ավելի արդյունավետ կերպով օգտվելու առկա իրականացման ընթացակարգերից՝ հետամուտ լինելով մարդու իրավունքների լիարժեք և հավասար իրացմանը և ոչ խտրական պայմաններին: Պետք է նաև ընդունվեն նոր ընթացակարգեր՝ կանանց հավասարության և կանանց մարդու իրավունքների հարցով հանձնառության իրականացումն ամրապնդելու նպատակով: Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովը և Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն պետք է արագորեն քննության առնեն պետիցիայի իրավունքի ներմուծման հնարավորությունը՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ կոնվենցիայի Կամընտիր արձանագրության պատրաստման միջոցով: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է Մարդու իրավունքների հանձնաժողովի որոշումը՝ իր հինգերորդ նստաշրջանում քննարկելու կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողի նշանակման հարցը:

41. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է իրենց կյանքի ընթացքում կանանց կողմից ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր ստանդարտներից օգտվելու կարևորությունը: Կանանց վերաբերյալ համաշխարհային խորհրդաժողովի և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, ինչպես նաև 1968 թ. Թեհրանի հայտարարության համատեքստում Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, կանանց և տղամարդկանց միջև հավասարության հիման վրա, կնոջ իրավունքը՝ օգտվելու մատչելի և պատշաճ առողջապահական ծառայություններից և ընտանեկան պլանավորման ծառայությունների հնարավոր ամենալայն շրջանակից, ինչպես նաև բոլոր մակարդակներում կրթություն ստանալու հավասար հնարավորությունից:

42. Պայմանագրային մշտադիտարկման մարմինները պետք է իրենց քննարկումներում և արդյունքներում ընդգրկեն կանանց կարգավիճակի և կանանց մարդու իրավունքների հարցը՝ օգտվելով գենդերային ուղղվածության տվյալներից: Պետությունները պետք է խրախուսվեն՝ պայմանագրային մշտադիտարկման մարմիններին ներկայացվող իրենց զեկույցներում *դե յուրե* և *դե ֆակտո* օգտվելու կանանց իրավիճակի վերաբերյալ տեղեկություններից: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը գոհունակությամբ նշում է, որ Մարդու իրավունքների հանձնաժողովն իր քառասունիններորդ նստաշրջանում ընդունել է 1993 թ. մարտի 8-ի 1993/46 բանաձևը՝ ամրագրելով, որ մարդու իրավունքների դաշտում գործող զեկուցողները և աշխատանքային խմբերը նույնպես պետք է խրախուսվեն այդպես վարվել: Պետք է նաև Կանանց առաջխաղացման բաժանմունքի կողմից Միավորված

ազգերի կազմակերպության այլ մարմինների համագործակցությամբ քայլեր ձեռնարկվեն՝ ապահովելու, որ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցով գործողությունները կանոնավորապես անդրադառնան կանանց մարդու իրավունքների խախտումներին, այդ թվում՝ գենդերային ուղղվածության չարաշահումներին: Պետք է խրախուսվի վերապատրաստման կազմակերպումը Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների և մարդասիրական օգնության անձնակազմերի համար՝ օգնելու նրանց հասկանալ կանանց իրավունքների խախտումները և զբաղվելու դրանցով և իրականացնելու իրենց աշխատանքն առանց գենդերային հիմքով կողմնակալության:

43. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կառավարություններին և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին հորդորում է օժանդակել որոշումներ կայացնող պաշտոնների՝ կանանց համար հասանելիությանը և նրանց ավելի մեծ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացին: Այն խրախուսում է հավելյալ քայլեր ձեռնարկել Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության շրջանակներում՝ նշանակելու և առաջ մղելու աշխատակազմի կին անդամների՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության, և Միավորված ազգերի կազմակերպության այլ առանցքային ու օժանդակ օրգաններին խրախուսում է երաշխավորել կանանց մասնակցությունը հավասարության պայմաններում:

44. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է Կանանց համաշխարհային խորհրդաժողովը, որը անցկացվելու է 1995 թ., Պեկինում, և հաստատակամորեն պնդում, որ կանանց մարդու իրավունքները պետք է կարևոր դեր խաղան դրա քննարկումներում՝ համաձայն Կանանց հարցերով համաշխարհային խորհրդաժողովի առաջնահերթ թեմաների՝ հավասարություն, զարգացում և խաղաղություն:

4. Երեխայի իրավունքները

45. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է «Ամենակարևորը՝ երեխաներին» սկզբունքը և, այս առումով, ընդգծում խոշոր ազգային և միջազգային ջանքերի կարևորությունը, հատկապես՝ Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի կողմից գործադրվող, հանուն երեխայի գոյատևման, պաշտպանության, զարգացման և մասնակցության իրավունքների նկատմամբ հարգանքի խթանման:

46. Պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ մինչև 1995 թ. հասնելու Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համընդհանուր վավերացման և Երեխաների հարցերով համաշխարհային գագաթաժողովի կողմից ընդունված՝

Երեխաների գոյատևման, պաշտպանության և զարգացման համաշխարհային հռչակագրի ու Գործողությունների ծրագրի համընդհանուր ստորագրման, ինչպես նաև դրանց արդյունավետ կենսագործման: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հորդորում է հետ վերցնել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային արված այն վերապահումները, որոնք հակասում են Կոնվենցիայի խնդրին և նպատակին կամ, այլապես, հակասում են միջազգային պայմանագրային իրավունքին:

47. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը հորդորում է բոլոր Պետություններին՝ իրենց առկա ռեսուրսների առավելագույն չափով միջոցառումներ ձեռնարկել, միջազգային համագործակցության աջակցությամբ, հասնելու Համաշխարհային գագաթաժողովի Գործողությունների ծրագրի նպատակների իրականացմանը: Խորհրդաժողովը Պետություններին կոչ է անում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ինտեգրել իրենց ազգային Գործողությունների ծրագրերում: Գործողությունների այս ազգային ծրագրերի և միջազգային ջանքերի միջոցով հատուկ ուշադրություն պետք է հատկացվի երեխաների և մայրական մահացության մակարդակի նվազեցմանը, թերսնման և անգրագիտության ցուցանիշների կրճատմանը և անվտանգ խմելու ջրի ու հիմնական կրթության հասանելիությանը: Անհրաժեշտության պարագայում պետք է մշակվեն գործողությունների ազգային ծրագրեր՝ պայքարելու ավերիչ արտակարգ իրավիճակների դեմ, որոնք հետևանք են բնական աղետների և զինված հակամարտությունների, ինչպես նաև երեխաների ծայրահեղ աղքատության՝ հավասարապես լուրջ խնդրի դեմ:

48. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հորդորում է միջազգային աջակցությամբ լուծում տալ հատկապես դժվար պայմաններում գտնվող երեխաների սուր խնդրին: Պետք է ակտիվորեն պայքարել երեխաների շահագործման ու նրանց նկատմամբ բռնությունների դեմ, այդ թվում՝ վերացնելով այդ երևույթների խորքային պատճառները: Արդյունավետ միջոցառումներ են անհրաժեշտ ընդդեմ հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատման, վնասակար մանկական աշխատանքի, երեխաների և նրանց օրգանների վաճառքի, մանկական մարմնավաճառության, մանկական պոռնկագրության, ինչպես նաև սեռական բռնության այլ եղանակների:

49. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը աջակցում է Միավորված ազգերի կազմակերպության և վերջինիս մասնագիտացված գործակալությունների ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ ապահովելու աղջիկ երեխաների մարդկային իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ու խթանումը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը պետություններին հորդորում է վերացնել աղջիկ երեխաների

նկատմամբ խտրականություն պարունակող և նրանց վնասող գործող օրենքներն ու կանոնակարգերը:

50. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վճռականորեն աջակցում է այն առաջարկին, որ Գլխավոր քարտուղարը նախաձեռնի ուսումնասիրություն զինված հակամարտություններում երեխաների պաշտպանության բարելավման միջոցների հարցով: Պետք է իրականացվեն մարդասիրական նորմերը և միջոցներ ձեռնարկվեն՝ պատերազմական գոտիներում գտնվող երեխաներին պաշտպանելու և նրանց տրամադրվող օգնությունը դյուրացնելու ուղղությամբ: Միջոցառումները պետք է ներառեն երեխաների պաշտպանությունը պատերազմական բոլոր զինատեսակների, հատկապես՝ հակահետևակային ականների առանց ընտրության կիրառումից: Պետք է անհապաղ բավարարվի պատերազմի ժամանակ վնասվածքներ ստացած երեխաների հետբուժական խնամքի և վերականգնման անհրաժեշտությունը: Խորհրդաժողովը կոչ է անում Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին՝ ուսումնասիրել զինված ուժերում նորակոչիկների հավաքագրման նվազագույն տարիքը բարձրացնելու հարցը:

51. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ երեխաների մարդու իրավունքներին և իրավիճակին վերաբերող հարցերը կանոնավորապես ուսումնասիրվեն և դիտարկվեն Միավորված ազգերի կազմակերպության բոլոր առնչվող օրգանների և մեխանիզմների ու մասնագիտացված գործակալությունների վերահսկիչ մարմինների կողմից՝ համաձայն իրենց մանդատների:

52. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ճանաչում է ոչ կառավարական կազմակերպությունների խաղացած կարևոր դերը մարդու իրավունքների բոլոր գործիքների և, մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի արդյունավետ իրականացման հարցում:

53. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին հնարավորություն տրվի, Մարդու իրավունքների կենտրոնի աջակցությամբ, հրատապ և արդյունավետ կերպով իրականացնել իր մանդատը՝ հատկապես նկատի առնելով Կոնվենցիայի վավերացման և ազգային զեկույցների ներկայացման աննախադեպ բարձր ցուցանիշները:

5. Խոշտանգումներից զերծ մնալը

54. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է բազմաթիվ անդամ Պետությունների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի

կամ պատժի դեմ կոնվենցիայի վավերացումը և խրախուսում դրա արագ վավերացումը այլ անդամ Պետությունների կողմից:

55. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը շեշտում է, որ մարդկային արժանապատվության դեմ ամենասոսկալի խախտումներից մեկը խոշտանգման գործողությունն է, որի արդյունքը խեղում է մարդկային արժանապատվությունը և վնասում զոհերի կարողությունը՝ շարունակելու իրենց կյանքն ու գործունեությունը:

56. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ մարդու իրավունքների իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի ներքո խոշտանգումներից զերծ լինելը մի իրավունք է, որը պետք է պաշտպանվի բոլոր հանգամանքներում, այդ թվում՝ ներքին կամ միջազգային խռովությունների կամ զինված հակամարտությունների ժամանակ:

57. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, հետևաբար, բոլոր Պետություններին հորդորում է անհապաղ վերջ տալ խոշտանգումների պրակտիկային և մեկընդմիշտ արմատախիլ անել այս չարիքը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և առնչվող կոնվենցիաների լիարժեք իրականացման միջոցով և, անհրաժեշտության դեպքում, առկա մեխանիզմների ամրապնդմամբ: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը բոլոր Պետություններին կոչ է անում լիարժեքորեն համագործակցել խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողի հետ՝ վերջինիս մանդատի իրականացման հարցում:

58. Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի առողջապահական անձնակազմի, մասնավորապես բժիշկների դերին առնչվող՝ Բժշկական էթիկայի սկզբունքների համընդհանուր պահպանման և արդյունավետ իրականացման խնդրին՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Ընդհանուր վեհաժողովի կողմից ընդունված Խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բանտարկյալների և կալանավորների պաշտպանության վերաբերյալ փաստաթղթի:

59. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը շեշտում է Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում հետագա կոնկրետ գործողության կարևորությունը՝ ուղղված խոշտանգումների զոհերին աջակցության տրամադրմանը և նրանց ֆիզիկական, ֆիզիոլոգիական և սոցիալական վերականգնման ավելի արդյունավետ միջոցների ապահովմանը: Այս նպատակով անհրաժեշտ միջոցների տրամադրմանը պետք է բարձր առաջնահերթություն տրվի, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների զոհերի կամավոր հիմնադրամին հավելյալ ներդրումներ կատարելու միջոցով:

60. Պետությունները պետք է չեղյալ համարեն այն նորմատիվ ակտերը, որոնք հանգեցնում են մարդու իրավունքների այնպիսի կոպիտ խախտումների համար պատասխանատու անձանց անպատժելիությանը, ինչպիսին է խոշտանգումը, և դատապարտեն այսօրինակ խախտումները՝ այդպիսով օրենքի գերիշխանության ամուր հիմք ստեղծելով:

61. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ խոշտանգումները արմատախիլ անելու ջանքերը պետք է, նախ և առաջ, կենտրոնանան կանխարգելման հարցի վրա, հետևաբար կոչ է անում շուտափույթ ընդունել Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը, որով նախատեսվում է կալանավայրեր կանոնավոր այցեր կատարելու կանխարգելիչ համակարգի ստեղծում:

Բռնի անհետացումներ

62. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, ողջունելով Ընդհանուր վեհաժողովի կողմից Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրի ընդունումը, կոչ է անում բոլոր Պետություններին արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ ձեռնարկել բռնի անհետացման գործողությունները կանխելու, ընդհատելու և պատժելու նպատակով: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ բոլոր Պետությունների պարտականությունն է, ցանկացած հանգամանքում, հետաքննություն կատարել այն դեպքերում, երբ պատճառ կա կարծելու, որ իրենց իրավասության տակ գտնվող տարածքում տեղի է ունեցել բռնի անհետացում, և, ենթադրությունների հաստատման դեպքում, պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

6. Հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները

63. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վերահաստատում է, որ մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները համընդհանուր են և այդպիսով անվերապահորեն տարածվում են հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Յուրաքանչյուր անձ ծնվում է հավասար և ունի կյանքի ու բարեկեցության, կրթության և աշխատանքի, անկախ ապրելու և հասարակության բոլոր ոլորտներում ակտիվ մասնակցության միևնույն իրավունքները: Ցանկացած ուղղակի խտրականություն կամ այլ բացասական խտրական վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ, հետևաբար, նրա իրավունքների խախտում է: Մարդու իրավունքների համաշխարհային

խորհրդաժողովը կառավարություններին կոչ է անում անհրաժեշտության դեպքում ընդունել օրենքներ կամ համապատասխանեցնել եղածները՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ այս կամ այն իրավունքից օգտվելու հնարավորությունը:

64. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղն ամենուր է: Հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է երաշխավորվի հավասար հնարավորություն՝ սոցիալապես սահմանված բոլոր խոչընդոտների վերացման միջոցով, լինեն դրանք ֆիզիկական, ֆինանսական, սոցիալական կամ հոգեբանական, որոնք բացառում կամ սահմանափակում են նրանց մասնակցությունը հասարակության կյանքում:

65. Վկայակոչելով Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող համաշխարհային գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է Ընդհանուր վեհաժողովի կողմից իր երեսունյոթերորդ նստաշրջանում, Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը կոչ է անում Ընդհանուր վեհաժողովին և Տնտեսական ու սոցիալական խորհրդին՝ 1993 թ. իրենց հավաքին ընդունել ստանդարտ կանոնների նախագիծը հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների համահավասարեցման վերաբերյալ:

Գ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

66. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ առաջնահերթություն տրվի ժողովրդավարության, զարգացման և մարդու իրավունքների խթանման ազգային և միջազգային գործողություններին:

67. Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի մարդու իրավունքներին առնչվող հաստատությունների հզորացմանն աջակցելուն ուղղված միջոցառումներին, բազմակարծիք քաղաքացիական հասարակության ամրապնդմանը և խոցելի համարվող խմբերի պաշտպանությանը: Այս համատեքստում կառավարությունների խնդրանքով տրամադրված օգնությունը ազատ և արդար ընտրությունների անցկացման նպատակով, այդ թվում՝ օգնությունը ընտրությունների մարդու իրավունքների ասպեկտների, ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության առումով առանձնահատուկ կարևորություն ունի: Հավասարապես կարևոր է աջակցությունը, որ պետք է տրամադրվի օրենքի գերակայության ամրապնդմանը, արտահայտման ազատության խթանմանը և արդարադատության իրականացմանը, ինչպես նաև մարդկանց իրական և արդյունավետ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացում:

68. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է Մարդու իրավունքների կենտրոնի կողմից ուժեղացված

խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական աջակցության գործողությունների իրականացման անհրաժեշտությունը: Կենտրոնը պետք է Պետությունների համար նրանց խնդրանքի դեպքում ապահովի մարդու իրավունքների առանձնահատուկ հարցերի առնչությամբ աջակցություն ստանալու հնարավորություն, այդ թվում՝ զեկույցների պատրաստումը մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի ներքո, ինչպես նաև գործողությունների համաձայնեցված և համակողմանի ծրագրերի իրականացման նպատակով՝ հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության: Մարդու իրավունքների հաստատությունների և ժողովրդավարության ամրապնդումը, մարդու իրավունքների իրավական պաշտպանությունը, պաշտոնյաների և այլոց վերապատրաստումը, լայնահենք կրթությունն ու հանրային տեղեկատվությունը՝ ուղղված մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի խթանմանը՝ այս ամենը պետք է առկա լինեն որպես այս ծրագրերի բաղադրիչներ:

69. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը վճռականորեն առաջարկում է, որ Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ստեղծվի համակողմանի ծրագիր՝ Պետություններին օգնելու իրականացնել մարդու իրավունքների իրացման և օրենքի գերակայության պահպանման հարցում ուղղակի ազդեցություն ունեցող ազգային համապատասխան կառույցների ստեղծման և ամրապնդման խնդիրը: Այսպիսի ծրագիրը, որը համակարգվելու է Մարդու իրավունքների կենտրոնի կողմից, պետք է կարողանա, հետաքրքրված կառավարությունների խնդրանքով, տեխնիկական և ֆինանսական աջակցություն ապահովել ազգային նախագծերին՝ քրեակատարողական հիմնարկների բարեփոխումների, մարդու իրավունքների թեմայով իրավաբանների, դատավորների և անվտանգության ուժերի կրթության և վերապատրաստման և գործունեության ցանկացած այլ ոլորտում, որը էական նշանակություն ունի օրենքի գերակայության պատշաճ իրականացման համար: Այդ ծրագիրը Պետությունների համար պետք է ստեղծի գործողությունների ծրագրերի իրականացման համար օգնությունից օգտվելու հնարավորություն՝ հանուն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության:

70. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խնդրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝ առաջարկներ ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Ընդհանուր վեհաժողովին, որոնք այլընտրանքային տարբերակներ կպարունակեն առաջարկվող ծրագրի ստեղծման, կառուցվածքի, գործունեության մեթոդների և ֆինանսավորման վերաբերյալ:

71. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ յուրաքանչյուր Պետություն հաշվի առնի գործողությունների ազգային ծրագրի ստեղծման ցանկալիությունը, որով կհստակեցվի, թե տվյալ

Պետությունն ինչ քայլերով պետք է բարելավի մարդու իրավունքների խթանումն ու պաշտպանությունը:

72. Մարդու իրավունքների խորհրդաժողովը վերահաստատում է, որ պետք է իրականացվի և իրացվի զարգացման համընդհանուր և անօտարելի իրավունքը, ինչպես սահմանված է Զարգացման իրավունքի մասին հռչակագրում: Այս համատեքստում Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը ողջունում է Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից զարգացման իրավունքի խնդրով թեմատիկ աշխատանքային խմբի նշանակումը և հորդորում, որ Աշխատանքային խումբը, խորհրդակցելով և համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության համակարգի այլ օրգանների և գործակալությունների հետ, Միավորված ազգերի Ընդհանուր վեհաժողովի շուտափույթ քննարկման համար անհապաղ ձևակերպի համակողմանի և արդյունավետ միջոցառումներ՝ ուղղված Զարգացման իրավունքի մասին հռչակագրի իրականացման և իրացման հարցում առկա խոչընդոտների վերացմանը և ուղիներ ու միջոցներ առաջարկելով բոլոր Պետությունների կողմից զարգացման իրավունքի իրացման համար:

73. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ ոչ կառավարական և այլ բազային մակարդակում ձեւավորված (համայնքային) կազմակերպությունները, որոնք ակտիվ են զարգացման և/կամ մարդու իրավունքների հարցերում, պետք է հնարավորություն ստանան գլխավոր դեր խաղալու ազգային և միջազգային մակարդակներում զարգացման իրավունքին առնչվող քննարկումներում, գործողություններում և իրականացման հարցում՝ համագործակցելով կառավարությունների հետ, զարգացմանն ուղղված համագործակցության բոլոր համապատասխան տիրույթներում:

74. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը դիմում է կառավարություններին, իրավասու գործակալություններին և հաստատություններին՝ զգալիորեն մեծացնել մարդու իրավունքները պաշտպանելու կարողություն ունեցող գործունակ իրավական համակարգի ստեղծմանը, ինչպես նաև այս ոլորտում գործող ազգային հաստատություններին հատկացվող միջոցները: Զարգացմանն ուղղված համագործակցության ոլորտի դերակատարները պետք է նկատի առնեն զարգացման, ժողովրդավարության և մարդու իրավունքների փոխադարձաբար ամրապնդող փոխհարաբերությունները: Համագործակցությունը պետք է հիմնված լինի երկխոսության և թափանցիկության վրա: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև կոչ է անում ստեղծել համակողմանի ծրագրեր, այդ թվում՝ օրենքի գերակայությանը և ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանը վերաբերող տեղեկությունների և փորձագիտություն ունեցող անձնակազմի ռեսուրսային բանկեր:

75. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խրախուսում է Մարդու իրավունքների հանձնաժողովին՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի համագործակցությամբ շարունակել քննության առնել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրությունները:

76. Մարդու իրավունքների միջազգային խորհրդաժողովն առաջարկում է, որ ավելի մեծ ռեսուրսներ հատկացվեն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության տարածաշրջանային կառույցների ամրապնդմանը կամ ստեղծմանը՝ Մարդու իրավունքների կենտրոնի խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական աջակցության ծրագրերի ներքո: Պետությունները խրախուսվում են աջակցություն խնդրել այնպիսի նպատակներով, ինչպիսիք են տարածաշրջանային և ենթատարածաշրջանային աշխատաժողովները, սեմինարները և ինֆորմացիայի փոխանակման նախաձեռնությունները, որոնք ուղղված են մարդու իրավունքների խթանման և պաշտպանության տարածաշրջանային կառույցների ամրապնդմանը՝ համաձայն մարդու իրավունքների համընդհանուր ստանդարտների, որոնք առկա են մարդու իրավունքներին նվիրված միջազգային փաստաթղթերում:

77. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն աջակցում է Միավորված ազգերի կազմակերպության և իր համապատասխան մասնագիտացված գործակալությունների կողմից ձեռնարկվող միջոցառումները՝ ապահովելու արհմիությունների իրավունքների արդյունավետ խթանումն ու պաշտպանությունը, ինչպես նախատեսված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով և միջազգային այլ առնչվող փաստաթղթերով: Այն կոչ է անում բոլոր Պետություններին՝ լիարժեքորեն կատարել միջազգային փաստաթղթերում այս կապակցությամբ առկա իրենց պարտավորությունները:

Դ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

78. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը մարդու իրավունքների թեմայով կրթությունը, վերապատրաստումը և հանրային տեղեկատվությունը էական է համարում համայնքների միջև կայուն ու ներդաշնակ հարաբերությունների խթանման և կայացման, ինչպես նաև փոխըմբռնման, հանդուրժողականության և խաղաղության խթանման հարցում:

79. Պետությունները պետք է ձգտեն արմատախիլ անել անգրագիտությունը և պետք է կրթությունն ուղղեն դեպի մարդու անհատականության լիարժեք զարգացում և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդում: Մարդու իրավունքների

համաշխարհային խորհրդաժողովը բոլոր Պետություններին և հաստատություններին կոչ է անում մարդու իրավունքները, մարդասիրական իրավունքը, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը որպես առարկաներ ներառել բոլոր կրթական ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատությունների ուսումնական պլաններում:

80. Մարդու իրավունքների կրթությունը պետք է ներառի խաղաղությունը, ժողովրդավարությունը, զարգացումը և սոցիալական արդարությունը, ինչպես սահմանված է մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, հասնելու ընդհանուր ըմբռնման և իրազեկվածության՝ մարդու իրավունքների հարցով համընդհանուր հանձնառության ամրապնդման նկատառումով:

81. Հաշվի առնելով 1993 թ. մարտին Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Մարդու իրավունքների կրթության և ժողովրդավարության միջազգային կոնգրեսի կողմից ընդունված Գործողությունների համաշխարհային ծրագիրը մարդու իրավունքների կրթության և ժողովրդավարության վերաբերյալ, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ փաստաթղթերը՝ Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Պետությունները մշակեն որոշակի ծրագրեր և ռազմավարություններ՝ մարդու իրավունքների վերաբերյալ ամենալայն կրթության և հանրային տեղեկատվության տարածման նպատակով՝ հատուկ ուշադրություն հատկացնելով կանանց մարդու իրավունքներին:

82. Կառավարությունները, միջկառավարական կազմակերպությունների, ազգային հաստատությունների և ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցությամբ պետք է խթանեն մարդու իրավունքների և փոխադարձ հանդուրժողականության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն ընդգծում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացվող Մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման համաշխարհային քարոզարշավի ամրապնդման կարևորությունը: Նրանք պետք է նախաձեռնեն և աջակցեն մարդու իրավունքների վերաբերյալ կրթությանը և կատարեն այս ոլորտում հանրային տեղեկատվության արդյունավետ տարածմանն ուղղված գործողություններ: Միավորված ազգերի կազմակերպության համակարգի խորհրդատվական ծառայությունները և տեխնիկական աջակցության ծրագրերը պետք է կարող լինեն անմիջապես արձագանքելու Պետությունների խնդրանքներին՝ կապված մարդու իրավունքների ոլորտում կրթական և վերապատրաստման գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով և մարդասիրական իրավունքով նախատեսված ստանդարտների, և այնպիսի խմբերում դրանց կիրառության հետ, ինչպիսիք են զինված ուժերը, իրավապահ անձնակազմը,

ոստիկանությունը և առողջապահական մասնագիտությունները:
Պետք է դիտարկվի Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կրթության տասնամյակի հռչակումը՝ հանուն կրթական այս գործողությունների խթանման, խրախուսման և կենտրոնացման:

Ե. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

83. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը Կառավարություններին հորդորում է մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում պարունակվող ստանդարտները ներառել ներպետական օրենսդրությունում և ամրապնդել ազգային կառույցները, հաստատությունները և հասարակության օրգանները, որոնք դերակատարում ունեն մարդու իրավունքների խթանման և պահպանության հարցում:

84. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է ամրապնդել Միավորված ազգերի կազմակերպության գործունեությունն ու ծրագրերը՝ բավարարելու օգնության խնդրանքները, որոնք ներկայացվում են այն Պետությունների կողմից, որոնք ցանկանում են ստեղծել կամ ամրապնդել մարդու իրավունքների խթանման և պաշտպանության իրենց սեփական ազգային հաստատությունները:

85. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը նաև խրախուսում է ազգային հաստատությունների միջև համագործակցության ամրապնդումը՝ մարդու իրավունքների խթանման և պաշտպանության նպատակով, մասնավորապես տեղեկությունների և փորձի փոխանակման միջոցով, ինչպես նաև համագործակցությունը Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

86. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն այս կապակցությամբ հաստատակամորեն խորհուրդ է տալիս, որ մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների ներկայացուցիչները պարբերական հանդիպումներ գումարեն Մարդու իրավունքների կենտրոնի հովանու ներքո՝ իրենց մեխանիզմների բարելավման ուղիներն ու միջոցները քննության առնելու և փորձի փոխանակման նպատակով:

87. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է մարդու իրավունքների պայմանագրային մարմիններին, պայմանագրային մարմինների նախագահողների ժողովներին և մասնակից Պետությունների հավաքներին, որպեսզի նրանք շարունակեն քայլեր ձեռնարկել՝ համակարգելու զեկույցների ներկայացման բազմաթիվ պահանջներն ու ուղեցույցները, որոնք վերաբերում են մարդու իրավունքների համապատասխան

կոնվենցիաների ներքո Պետությունների զեկույցների նախապատրաստմանը, և ուսումնասիրելու այն առաջարկությունը, որ յուրաքանչյուր Պետության ստանձնած պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ մեկ ընդհանուր զեկույցի ներկայացումն այս ընթացակարգերն ավելի արդյունավետ և ազդեցիկ կդարձներ:

88. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի մասնակից Պետությունները, Ընդհանուր վեհաժողովը ու Տնտեսական և սոցիալական խորհուրդը դիտարկեն մարդու իրավունքների գործող պայմանագրային մարմինները և տարբեր թեմատիկ մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ նպատակ ունենալով տարբեր մարմինների, մեխանիզմների ու ընթացակարգերի ավելի լավ համակարգման միջոցով խթանել ավելի մեծ օգտակարություն և արդյունավետություն ՝ հաշվի առնելով իրենց մանդատների և առաջադրանքների անհարկի համընկնումներից և կրկնորդումներից խուսափելու անհրաժեշտությունը:

89. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է շարունակել աշխատանքները պայմանագրային մարմինների գործառույթների իրականացման բարելավման ուղղությամբ՝ հաշվի առնելով այս կապակցությամբ ներկայացված մի շարք առաջարկները, մասնավորապես նրանք, որ արվել են հենց պայմանագրային մարմինների և պայմանագրային մարմինների նախագահողների հավաքների կողմից: Պետք է նաև խրախուսվի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի որդեգրած համակողմանի ազգային մոտեցումը:

90. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ մարդու իրավունքների պայմանագրերի մասնակից Պետությունները դիտարկեն կամընտիր հաղորդումների բոլոր առկա ընթացակարգերը:

91. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը մտահոգություն է հայտնում մարդու իրավունքների խախտումների մեղավորների անպատժելիության հարցի կապակցությամբ և աջակցում Մարդու իրավունքների հանձնաժողովի ու Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կանխարգելման և նրանց պաշտպանության հարցերով ենթահանձնաժողովի ջանքերը՝ քննարկելու այդ խնդրի բոլոր կողմերը:

92. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Մարդու իրավունքների հանձնաժողովը քննության առնի միջազգային և տարածաշրջանային մակարդակներում մարդու իրավունքների գոյություն ունեցող գործիքների ավելի լավ իրականացման հարցը և Միջազգային իրավունքի հանձնաժողովին խրախուսում է շարունակել իր աշխատանքը միջազգային քրեական դատարանի ուղղությամբ:

93. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը դիմում է 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներին և համապատասխան արձանագրություններին դեռևս չմիացած Պետություններին՝ միանալ դրանց և դրանց լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկել ազգային բոլոր, այդ թվում՝ օրենսդրական անհրաժեշտ միջոցառումները:

94. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է շուտափույթ ամբողջացնել և ընդունել անհատների, խմբերի և հասարակության օրգանների իրավունքի և պարտականության մասին հռչակագրի նախագիծը՝ համընդհանուր կերպով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման և պաշտպանության նպատակով:

95. Մարդու իրավունքների համընդհանուր խորհրդաժողովն ընդգծում է Մարդու իրավունքների հանձնաժողովի և Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կանխարգելման և նրանց պաշտպանության հարցերով ենթահանձնաժողովի հատուկ ընթացակարգերի, զեկուցողների, ներկայացուցիչների, փորձագետների և աշխատանքային խմբերի համակարգի պահպանման և ամրապնդման կարևորությունը, որպեսզի նրանց հնարավորություն տրվի աշխարհի բոլոր Պետություններում իրականացնել իրենց առաքելությունները՝ նրանց մարդկային և ֆինանսական անհրաժեշտ միջոցներով ապահովելու միջոցով: Ընթացակարգերը և մեխանիզմները պետք է հնարվորություն տան կանոնավոր հանդիպումների միջոցով ներդաշնակեցնել և կատարելագործել նրանց աշխատանքը: Բոլոր Պետություններին խնդրվում է լիարժեքորեն համագործակցել այս ընթացակարգերի և մեխանիզմների հետ:

96. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունն ավելի ակտիվ դեր ստանձնի մարդու իրավունքների խթանման և պաշտպանության հարցում՝ ապահովելու միջազգային մարդասիրական իրավունքի լիակատար պահպանումը զինված հակամարտությունների բոլոր իրավիճակներում՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության նպատակների և սկզբունքների:

97. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը, ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացվող որոշ խաղաղապահ գործողություններին առնչվող հատուկ կառույցների մարդու իրավունքների բաղադրիչների կարևոր դերը, առաջարկում է, որ Գլխավոր քարտուղարը հաշվի առնի Մարդու իրավունքների կենտրոնի և մարդու իրավունքների մեխանիզմների զեկույցները, փորձը և կարողությունները՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան:

98. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացումն ամրապնդելու համար պետք է քննության առնել հավելյալ մոտեցումներ, ինչպիսիք են իրավունքների իրացման հարցում առաջընթացի չափման ցուցիչների համակարգը, որը սահմանված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով: Պետք է համաձայնեցված ջանքեր գործադրվեն՝ ապահովելու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ճանաչումն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Զ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՁՈՐԴՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

99. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն առաջարկում է Ընդհանուր վեհաժողովին, Մարդու իրավունքների հանձնաժողովին և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի՝ մարդու իրավունքներին առնչվող այլ օրգաններին ու գործակալություններին՝ դիտարկել ներկա Հռչակագրում պարունակվող առաջարկությունների անհապաղ և լիարժեք իրականացման ուղիներն ու միջոցները, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների տասնամյակի հռչակման հնարավորությունը: Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովն այնուհետ առաջարկում է, որ Մարդու իրավունքների հանձնաժողովն ամենամյա հիմունքներով անդրադառնա այս նպատակին հասնելու ուղղությամբ արձանագրված առաջընթացին:

100. Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովը խնդրում է, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիսուներորդ տարեդարձի կապակցությամբ բոլոր Պետություններին, Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մարդու իրավունքներին առնչվող բոլոր օրգաններին ու գործակալություններին հրավիրի զեկույցներ ներկայացնել իրեն սույն հռչակագրի իրականացման հարցում արձանագրված առաջընթացի վերաբերյալ, և Ընդհանուր վեհաժողովի հիսուներեքերորդ նստաշրջանում զեկույց ներկայացնի Մարդու իրավունքների հանձնաժողովի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի միջոցով: Նմանապես, մարդու իրավունքների տարածաշրջանային և, հարկ եղած դեպքում, ազգային հաստատությունները, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունները կարող են սույն Հռչակագրի իրականացման հարցում առաջընթացի վերաբերյալ իրենց տեսակետները ներկայացնել Գլխավոր քարտուղարին: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի Միավորված ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներում ընդունված մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի և արձանագրությունների համընդհանուր վավերացման նպատակի հարցում առաջընթացի գնահատմանը: